մեռանիցի և Թողուցու կին՝ և որդի ոչ Թողուցու։ ղի առցէ եղբայր նորա զկին նորա , և յարուսցէ զաւակ եղբօր իւրում : Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ , առաջինն առ կին՝ և մեռաւ , և ոչ եհիղ զաւակ : Այլ երկրորդն առ զնոյնն՝ և մեռաւ, և ոչ նա եհիղ զաւակ . նոյնպէս և երրորդն առ զնոյն : Այլ եօթնեքեան իսկ . և ոչ Թողին զաւակ . յետ ամենեցուն մեռաւ և կինն : Արդ՝ ի յարութիւն յորժամ յառնիցեն , ո՞ր ի նոցանէ լինիցի կինն . զի եօթնեքեան կալան զնա կին : Պատասխանի ետ Յն և ասէ ցնոսա . ոչ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք . զի ոչ գիտէք զգիրս՝ և ոչ զզօրութիւն Աչ : Օր յորժամ ի մեռելոց յարիցեն , ոչ ամք կանայս առնեն , և ոչ կանայք արանց լինին . այլ իբրև զհրեշտակս իցեն՝ որ յերկինս են : Այլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն , ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ի գիրսն Մովսեսի ի մորենւոջն . ոյր ասաց ցնա Աչ . Ես եմ ասէ՝ Աչ Աբրահամու , Աչ Իսահակայ, և Աչ Յակովբայ : Այլ ոչ է Աչ մեռելոց՝ այլ կենդանեաց . և արդ՝ դուք յոյժ մոլորեալ էք : Այլ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ ասէր նմ մինչ վիճէին. իբրև եսես եհիղ բարւոք ետ նմ զպատասխանին , եհարց ցնա և ասէ . որ պատուիրան է առաջին : Այլ Յն ասէ ցնա . առաջին քան զամ՝ լուր Իսէլ Տէր Աչ մեր Տէր մի է , և սիրեսցես զՏէր Աչ քո յամ սրտէ քումմէ , և յամ անձնէ քումմէ , և յամ մտաց քոց , և յամ զօրուէ քումմէ . այս է առաջին պատուիրան : Այլ երկրորդն նման սմին . սիրեսցես զընկերն քո՝ իբրև զանձն քո . մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ : Այլ ասէ ցնա

դպիրն. բարուք է վարդապետ. ճշմարտութիւն ա-
սացեր՝ թէ մի է Ա՛ծ, և ոչ գոյ այլ բաց՛ ի նմանէ:
Եւ սիրելն զնա յամ սրտէ և յամ զօրութէ և յամ
մտաց, և սիրելն զընկերն իբրև զանձն, առաւել
է քան զողջակէսս և զպոհս: Եւ տեսեալ Յիսի թէ
իմաստութեամբ եւ զպատասխանին՝ ասէ ցնա. չես հե-
ռի յարքայութէն Ա՛ծ. և ոչ ևս ոք իշխէր ինչ հար-
ցանել ցնա: Պատասխանի եւ Յիսի և ասէ, մինչ
ուսուցանէր ի տաճարին. գիարդ ասեն դպիրքն.
եթէ Քրիստոս որդի Դաւթի է: Եւ ինքն Դաւիթ
Հոգւովն սրբով ասէ. ասաց Տէր ցՏեր իմ, նիստ ընդ
աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուա-
դան ոտից քոց: Ասէ՝ եթէ ինքն Դաւիթ գնա
Տէր կոչէ՝ գիարդ լիցի որդի նմա: Եւ բազմ ժո-
ղովուրդն լսէր նմա քաղցրութէ: Եւ ասէր ուսուցանելով
ի վարդապետութենէ իւրմէ. զգայչ լերուք ի դպ-
րացն անտի, որ կամին ի հանդերձս երեքելիս շրջել,
գնաւետիսս ընդունել ի հրապարակս, և գնաւետ-
թոռս ի ժողովուրդս, և զպահատզուխս ընթերիս:
Որ ուտեն զտուն այրեաց, պատճառանօք ե-
կարնալ զաղօթս, զի աւելի ևս դատաստանս ըն-
դալցին: Այր էր ընդդէմ գանձանակին, աե-
նէր թէ գիարդ ժողովուրդն արկանէր պղինձ
ի գանձանակն. և բազմ մեծատուն՝ արկին բազմ
ինչ: Եկն այրի մի՝ և արկ երկուս լումայս, որ է նա-
քարակիտ մի: Եւ կոչեցեալ աւր ինքն զաշակերտան,
ասէ ցնոսա. ամէն ասեմ ձեզ՝ զի այրին այն տատա-
պեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ի
գանձանակն: Ելանէր ամենեքեան յաւետարանէ
իւրեանց արկին. այլ նա՛ ի չքաւորութէ իւրմէ՝
զամ զոր ունէր՝ արկ գոյիւ ճաւի զկեանս իւր: 44:

Եւրգ.

ամենաթագ և հրաշալի տէրութեանդ :

Խոնարհեցայ . և աղաչեցայ :

Հեթէհոյլն ի պատառ ժառն ժողովին ու առնէ .

## ԱՂՕԹՔ :

Ա՛ղաչեմ զքեզ արարիչ ընդ ծառայի քում
Տէր լսատ բանի քում :

Պաղեր ես դու Տէր . և քաղցրութեամբ քով
խրատեա զիս :

Ընծերցուածս ի Յովննդոց :

Կ . 9 :

Եւ այս են ծնունդք Նոյի . Նոյ այր արդար
կատարեալ էր յազգի աւդ իւրում . և հաճոյ
եղև Նոյ Ած : Եւ ծնաւ Նոյ երիս որդիս . զՇեմ . զՀամ . զՅաբեթ : Եւ ապականեցաւ
երկիր առաջի Ած . և լցաւ երկիր անիրաւութեբ :
Եւ եառես Տէր Ած զերկիր , և էր ապականեալ . զի
ապականեաց ամ մարմին զճանապարհ իւր՝ի վր
երկրի : Եւ ասէ Տէր Ած ցՆոյ . ժամանակ ամ
մարդոյ հասեալ է առաջի իմ . զի լցաւ երկիր
անիրաւութբ՝ի նոցանէ . և ահա ես ապականեցից
զնս և զերկիր : Արդ՝ արա դու քեզ տապան՝ի
էրեքկուսի փայտից . խորշս խուշս գործեացես
զտապանն . և նաւթիւ ծեփեացես զնա ներքոյ և
արտաքոյ : Եւ այսպէս արասցես զտապանն . յե-
րեք հարիւր կանգնոյ զերկայնութեի տապանին . և

’ի յիսուն կանդնոյ զայնոսի . և յերեսուն կանգ-
նոյ զբաժնուի : Վասելով գործեացես ըզ-
տապանն . և ’ի մի կանգուն կատարեացես զնա ’ի
վերուստ . և զդուռս տապանին ’ի կողմանէ տա-
բացես . նէրքնատունս , և միջնատունս , և վեր-
նատունս գործեացես ’ի նմա : Եւ ես ահա ածից
զջրհեղեղ ջրոյ ’ի վերայ երկրի . ապականել զամ
մարմին , յորում է շունչ կենդանի ’ի ներքոյ երկ-
նից . և ինչ որ իցէ ’ի վերայ երկրի սատակեսցի : Եւ
եդից զուխտ իմ ընդ քեզ . և մտցես ’ի տապանն .
դու և որդիք քո . և կին քո , և կանայք որդւոց
քոց ընդ քեզ : Եւ յամենայնի անասնոց , և յամ
գազանաց , և յամենայն սողոց , երկուս երկուս յամէ մուծցես ’ի
տապանն բուծանել ընդ քեզ . արու և էգ լինիցին :
Յամ հաւուց թռչնոց ըստ ազգի . և յամ անաս-
նոց ըստ ազգի . և յամ սողոյն երկրի ըստ ազգի իւ-
րեանց , երկու երկու յամէ մտանիցեն առ քեզ . զի
կեցցեն : Եւ դու առնուցուս առ քեզ յամ կե-
րակրոց զոր ուտիցէք . և ժողովեսցես դու առ
քեզ . և եղիցի քեզ և նոցա կերակուր : Եւ արար
Նոյ զամ , զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր
Աստուած . նոյնպէս և արար : Եւ ասէ Աստուած ցՆոյ . մուտ
դու և ամ տուն քո ’ի տապանդ . զի զքեզ առի
արդար առաջի իմ յազգիդ յայդմիկ : Եւ յամ
անասնոց սրբոց մոյծ ընդ քեզ եօթն եօթն արու
և էգ . և յամ անասնոց որք ոչ են սրբք , երկուս
երկուս , արու և էգ : Եւ ’ի թռչնոց երկնից ’ի
սրբոց՝ եօթն եօթն արու և էգ . և ’ի թռչնոց որք
ոչ սրբք են՝ երկուս երկուս , արու և էգ . բուծանել
զաւակ ’ի վեր ամ երկրի : Եւ այլ ևս եօթն օր .
և ածից ես անձրեւ ’ի վեր երկրի զքառասուն տիւ
և զքա-

և զքառասուն գիշեր. և ընդեղից զնաք հասակ, զոր արարի յերեսաց երկրի: Եւ ասաց Նոյ զնաք, զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Աստ: Նոյ էր ամաց վեց հարիւրոց. և ջրհեղեղ ջուրցն եղև՝ի վերն երկրի: Եւ եմուտ Նոյ և որդիք նորա, և կին նորա. և կանայք որդւոց նորին ընդ նմա՝ի տապան, վասն ջուրցն հեղեղի: Եւ յայմ անասնոց սրբոց, և յանասնոց որք ոչ սրբք էին, և՝ի թռչնոց, որք ոչ սրբք էին, և յամ սողոցն՝ որք սողին՝ի վերն երկրի: Երկու երկու մտին առ Նոյ՝ի տապան անդր, արու և էգ, ոչ պատուիրեաց Նմա Աստ: Եւ եղև յետ եօթն աւուր և ջուր ջրհեղեղին եղև՝ի վերն երկրի: Յամին վեցհարիւրերորդի կենաց Նոյի, յերկրորդումն ամսեանն՝ի քսան և եօթն ամսոյն, և պատառեցան ամ աղբիւրք անդնդոց բազմաց, և սահանք երկնից բացան: Եւ եղև անձրև՝ի վերն երկրի զքառասուն տիւ, և զքառասուն գիշեր: Յաւուր յայնմիկ եմուտ Նոյ, Աեմ, Քամ, Յաբեթ, որդիք Նոյի, և կին Նոյի. և երեք կանայք որդւոց նորին ընդ նմա՝ի տապան անդր: Նոքա և ամ գազանք ըստ ազգի. և ամ անասունն ըստ ազգի իւրեանց. և ամ սողոն շարժուն՝ի վերն երկրի ըստ ազգի իւրեանց. և ամ հաւ թռչունն ըստ ազգի իւրում: Մտին առ Նոյ՝ի տապան անդր երկու երկու յամ մարմնոյ, յորում էր շունչ կենդանի: Եւ որք մտանէին՝ արու և էգ յամ մարմնոյ մտանէին, ոչ պատուիրեաց Աստ Նոյի: Եւ փակեաց Տէր Աստ արտաքոյ նորա զտապանն. և եղև ջրհեղեղ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ի վերն երկրի. և բազմացաւ ջուրն և վերացոյց զտապանն. և

քարձրացաւ յերկրէ: Եւ զօրանայր ջուրն և բազմանայր յոյժ՝ ի վերայ երկրի. և շրջէր տապանն ի վերայ ջրոց: Եւ սաստկանայր ջուրն յոյժ յոյժ՝ ի վերայ երկրի. և ծածկէր զամենայն բարձունս որք էին ի ներքոյ երկնից: Հնգետասան կանգուն բարձրացաւ ջուրն ի վեր. և ծածկեաց զամ լերինս: Եւ մեռաւ ամ մարմին շարժուն ի վերկրի. թռչնոց, և անասնոց՝ և գազանաց, ամ սողուն սեռուն ի վերկրի, և ամ մարդ: Եւ ամ որ ունէր շունչ կենդանի յանդունս իւր. և ամ որ ինչ էր ի վերայ ցամաքի մեռաւ: Եւ ընկեաց զամ հասակ որ էր ի վերայ երեսաց երկրի. ի մարդոյ մինչև յանասուն. և ի սողոց մինչև ի թռչունս երկնից. և ընկեցան յերկրէ. և մնաց միայն Նոյ, և որք ընդ նմա էին ի տապանի անդ: Եւ բարձրացաւ ջուրն ի վերկրի աւուրս հարիւր և յիսուն: Եւ յիշեաց Աստուած զՆոյ, և զամ գազանս, և զամ անասունս, և զամ թռչունս. որք էին ընդ նմա ի տապանի անդ. և եած Աստուած հողմ ի վերկրի, և դադարեաց ջուրն: Եւ նստան աղբիւրք անդնդոց, և սահանք երկնից. և արգելաւ անձրեւ յերկնից: Եւ դարձեալ տակաւ. երթայր ջուրն և թոշանայր յերկրէ. և նուազեր ջուրն յետ հարիւր և յիսուն աւուր: Եւ նստաւ տապանն յեօթներորդում ամսեանն ի քսանևեօթն ամսոյն ի լերինս Ուրարտացւոյ: Եւ ջուրն երթայր և նուազեր մինչև ի տասներորդ ամիսն: Իսկ յամսեանն մեռաւսանեներորդի, որ օր առաջին էր ամսոյն, երևեցան գլուխք լերանց: Եւ եղև յետ քառասուն աւուր՝ եբաց Նոյ զպատուհան տապանին զոր արար: Եւ արձակեաց զագուաւն, և եկ և անդրէն ոչ դար-

ձաւ

ձաւ մինչև ցջանաքիլ ջրոյն յերկրէ : Եւ ար-
ձակեաց զաղաւնին զՀետ նր տեսանել թէ ջա-
ծուցեալ էցէ ջուրն յերեսաց երկրի : Եւ չգտեալ
աղաւնւոյն հանգիստ ոտից իւրոց , դարձաւ անդ-
րէն առ նա'ի տապան անդր . զի ջուր դեռ ու-
նէր զնմ երեսս երկրի . և ձգեաց զձեռն և ըն-
կալաւ զնա . և էառ զնա անդրէն առ իւր'ի տա-
պան անդր : Եւ դադարեաց և աւուրս եօթն .
և դարձեալ արձակեաց զաղաւնին'ի տապանէ
անտի : Եւ դարձաւ առ նա աղաւնին ընդ երեկս .
և ունէր տերև ձիթենւոյ շիւղ'ի բերանի իւ-
րում . և գիտաց Նոյ , թէ ցածուցեալ են ջուրքն
յերկրէ : Եւ դադարեաց աւուրս եօթն և . և
դարձեալ արձակեաց զաղաւնին , և ոչ ևս յաւել
դառնալ առ նա : Եւ եղև'ի վեցհարիւրերորդի
և'ի միում ամի կենաց Նոյի , յամենայն ա-
ռաջնում , որ օր մի էր ամոյն , նոճազեաց ջուրն
յերեսաց երկրի . և եբաց Նոյ զձեղոյն տապա-
նին զոր արար : Եւ եառս զի նոճազեալ էր ջուրն
յերեսաց երկրի : Իսկ յամենայն երկրորդի , որ օր
քան և եօթն էր ամոյն՝ ցամաքեցաւ երկիր :
Եւ խօսեցաւ Տէր Ա՛ստ ընդ Նոյի , և ասէ : Ե՛լ'ի
տապանէ այսր դու և կին քո , և որդիք քո , և
կանայք որդւոց քոց ընդ քեզ : Եւ ամենայն գազանք
որք են ընդ քեզ . և ամ մնորիւն . 'ի թռչնոց
մինչև ցանասուն . և զամ սողուն զեռուն երկրի
հան ընդ քեզ . և զեռասցին'ի վի երկրի : Եւ ա-
ծեցէք և բազմացարուք'ի վերայ երկրի : Եւ ել
Նոյ , և կին նր , և կանայք որդւոց նր ընդ նմա :
Եւ ամ գազան , և ամ սողուն շարժուն , և ամ
թռչուն յերկրի ըստ ազգի իւրեանց , ելին'ի

տապանէ անտի : Եւ շինեաց Նոյ սեղան Տ֊ի . և
էառ յամ անասնոց սրբոց . և յամ թռչնոց սրբոց .
և եհան ողջակէզ ի վերայ սեղանոյ : Եւ հոտա-
ցաւ Տէր Տ֊ն ի հոտ անուշից . և ասէ Տէր Տ֊ն ,
ածելոյ զմտաւ , ոչ ևս յաւելից անիծանել զեր-
կիր վասն գործոց մարդկան . զի միտք սիրտ մարդոյ հաս-
տատեալ են ի խնամս չարն ի մանկութենէ
իւրմէ . արդ ոչ ևս յաւելից հարկանել զամ մար-
մին կենդանի ոգ այսր : Այսուհետև զամ ա-
ւուրս երկրի՝ սերմն և հունձք , ցուրտ և տօթ ,
ամառն և գարուն , ցրիւ և զմիշեր մի դադա-
րեսցեն : Եւ օրհնեաց Նո֊ն զնոսա և զորդիս նո֊ .
և ասէ ցնո . աճեցէք՝ և բազմացարծուք և լցէք
զերկիր և տիրեցէք դմա : Եւ ահ և երկիւղ
ձեր եղիցի ի վերայ ամ գազանաց երկրի . և ի վեր
ամ թռչնոց երկնից . և ի վեր ամ զեռնոց երկրի .
և ի վեր ամ ձկանց ծովու . զորս ընդ ձեռամբ
ձերով ետու : Եւ ամ զեռուն որ է կենդանի ,
ձեզ լիցի ի կերակուր . իբրև զբանջար խոտոյ
ետու ձեզ զամ : Բայց զմիս արեամբ շնչոյ մի
ուտիցէք : Վասնզի և զձեր արիւն շնչոյ խնդրե-
ցից , ի ձեռաց ամ գազանաց խնդրեցից զնա .
և ի ձեռաց մարդոյ . ի ձեռաց առն զբաւնչ եղ-
բօր իւրոյ խնդրեցից : Որ հեղու զարիւն մարդոյ՝
փոխանակ արեան նո֊ հեղցի արիւն նո֊ . զի ի
պատկեր Ա֊ն արարի ես զմարդն : Ա֊մ դուք ա-
ճեցէք՝ և բազմացարծուք՝ և լցէք զերկիր . և բազ-
մացարծուք ի վերա դորա : Եւ խօսեցաւ Տէր Ի֊ն ընդ
Նոյ . և ընդ որդիս նո֊ զոր ընդ նմա էին՝ և ա-
սէ : Եւ ահաւասիկ ես հաստատեմ զուխտ իմ
ընդ ձեզ և ընդ զաւակի ձերում յետ ձեր : Եւ

ընդ

ընդ ա՛մ՛ շ՛նչ՛ոյ կ՛ենդանւոյ որ՛ք ընդ ձե՛զ՝ են ։ ի՛ թռչնոց և յանասնոց և յա՛մ՛ դա՛զանաց երկրի որ՛ք ընդ ձե՛զ ։ և յա՛մ՛ե՛նց՛ո՛ւն որ՛ք ել՛ի՛ ի տապանէ՛ անտի ։ և յա՛մ՛ա՛ն՛ա՛սն՛ո՛յ երկրի ։ Ա՛ւ հաստատեցից զու՛խտ իմ՛ ընդ ձե՛զ ։ և ո՛չ ե՛ս մե՛ռ՛ի՛ ա՛մ՛ մա՛ր՛մ՛ի՛ ի՛ ջ՛ր՛հ՛ե՛ղ՛ե՛ղ ։ և ո՛չ ե՛ս ե՛ղ՛ի՛ջ՛ ջ՛ր՛հ՛ե՛ղ՛ե՛ղ ջ՛ու՛ր՛ց ապականել զա՛մ՛ երկիր ։ Ա՛ւ ասէ Տ՛ր Ա՛՛ծ ց՛Ա՛յ և ցո՛ր՛դ՛ի՛ս ն՛ո՛ր ։ այս է՛ նշան ու՛խ՛տ՛ի՛ն ։ զո՛ր ես տա՛ց ընդ իս և ընդ ձե՛զ ։ և ի՛ մէ՛ջ ա՛մ՛ շ՛նչ՛ոյ կ՛ենդանւոյ որ է՛ ընդ ձե՛զ ։ յա՛զա՛ս յա՛ւ՛ի՛տ՛ե՛ն՛ի՛ց ։ Օ՛ա՛ղ՛ե՛ն՛ իմ՛ եդի՛ց յա՛մ՛ա՛ս ։ և ե՛ղ՛ի՛ց՛ի՛ ի՛ նշանակ յա՛ւ՛ի՛տ՛ե՛ն՛ա՛կ՛ա՛ն՛ ու՛խ՛տ՛ի՛ն ընդ իս և ընդ ա՛մ՛ երկիր ։ Ա՛ւ ե՛ղ՛ի՛ց՛ի՛ ի՛ գ՛ու՛մ՛ա՛ր՛ե՛լ ի՛՛ն՛ձ՛ զ՛ա՛մ՛ա՛ս ի՛ վ՛ի՛ երկրի՛ ։ երևեսցի ա՛ղ՛ե՛ղ՛ն՛ իմ՛ յա՛մ՛ա՛ս ։ Ա՛ւ յի՛շ՛ե՛ց՛ի՛ց զու՛խտ իմ՛ որ ընդ իս և ընդ ձե՛զ ։ և ի՛ մէ՛ջ ա՛մ՛ շ՛նչ՛ոյ կ՛ենդանւոյ յա՛մ՛ մա՛ր՛մ՛ի՛ն ։ և ո՛չ ե՛ս ե՛ղ՛ի՛ց՛ի՛ ջ՛ր՛հ՛ե՛ղ՛ե՛ղ ի՛ սատակել զա՛մ՛ մա՛ր՛մ՛ի՛ն ։ Ա՛ւ ե՛ղ՛ի՛ց՛ի՛ ա՛ղ՛ե՛ղ՛ն՛ յա՛մ՛ա՛ս ։ և տե՛ս՛ց՛ի՛ յի՛շ՛ի՛լ զու՛խտ՛ա՛ն՛ յա՛ւ՛ի՛տ՛ե՛ն՛ա՛կ՛ա՛ն՛ ։ ի՛ մէ՛ջ իմ՛ և ի՛ մէ՛ջ ա՛մ՛ շ՛նչ՛ոյ կ՛ենդանւոյ ։ յա՛մ՛ մա՛ր՛մ՛ի՛ն որ է՛ ի՛ վ՛ի՛ երկրի՛ ։ Ա՛ւ ասէ Ա՛՛ծ ց՛Ա՛յ ։ այս է՛ նշան ու՛խ՛տ՛ի՛ն ։ զո՛ր ու՛խ՛տ՛ե՛ց՛ի՛ ես ընդ իս և ընդ ձե՛զ ։ և ի՛ մէ՛ջ ա՛մ՛ մա՛ր՛մ՛ո՛յ որ է՛ ի՛ վ՛ի՛ երկրի՛ ։ Ղ. 17 ։

## Ընդ՛ե՛ր՛ց՛ո՛ւ՛ած՛ս Ա՛՛ռ՛ա՛կ՛ա՛ց ։

Ղ. 1 ։

Ա՛ր՛մ՛ա՛ստ՛ա՛ւ՛ի՛ շ՛ի՛ն՛ե՛ա՛ց իւր տուն ։ և կ՛ա՛ն՛գ՛ն՛ե՛ա՛ց սիւնս եօթն ։ Ե՛ղ՛ե՛ն զե՛ղ՛ե՛ւս իւր ։ և խո՛ա՛ն՛ե՛ա՛ց ի՛ խո՛ա՛ն՛ա՛ր՛ա՛ն՛ս զ՛ի՛ն՛ի՛ իւր ։ և պատրաստեաց զսեղան իւր ։ Ա՛ւ առաքեաց զծառայս իւր՝ կոչել բարձր քարոզութ՛ի՛ւն ի՛ խո՛ա՛ն՛ե՛ւս իւր ։ Ա՛ւ ասէ ։

որ

որ ազ իցէ անզգամ ևկեսցէ առ իս : Նա ցպա-
կասամիտս ասէ : Նկայք՝ կերպ ք՛ի հացէ իմմէ՝
և արբէք զգինի իմ , զոր խառնեցի ձեզ : Թո՛ղէք
զանզգամութիւն , և կեցջէք . խնդրեցէք զիմաս-
տի , զի ապրեսջիք . և ուղղեցէք գիտութիւն զհան-
ճար . և ուղիղ ճանապարհաւ իմացարո՛ւք զնչուտս :
Մի՛ խրատէ զչարս՝ առցէ անձին իւրում անար-
գանս . և որ յանդիմանէ զամբարիշան , առեսյ
զանձն : Մի՛ յանդիմաներ զչարս՝ զի մի առես-
ցեն զքեզ . յանդիմանեա զիմաստունն , և սի-
րեսցէ զքեզ . (զանմիտն , և յաւելցի առնել
զքեզ :) Տո՛ւր իմաստնոյն պատճառս՝ և իմաստ-
նագոյն ևս լինի . ծանո՛ արդարոյն՝ և յաւելցի
ընդունիլ : Սկիզբն իմաստութե՛ երկիւղ Տ՛ն . և
խորհուրդք սրբոց հանճար . (իմանալ զօրէնս՝
մտաց առաւտաց է :) Ընդս օրինակաւ քո՛մ
ժամանակս կեցցես . և յաւելցին քեզ ամք կե-
նաց : ԺԱ :

## Ընթերցուածս Յոբայեայ մարգարէի :
## Ե . 9 :

Ա՛ՀԻ մի՛ երկնիղ բարձու՝ աւետարանիչդ Սիովն
նի . թո՛ւձրացո՛ ղօրութի՛ զբարբառ քո՝ աւե-
տարանիչդ Երեմի . բարձրացուցէք . մի՛ երկնչիք :
Ընդ՝ ցքաղաքսդ Յուդայ . ահաւասիկ Ը՛ն ձեր .
ահաւասիկ Տ՛ն Տ՛ն գայ զօրութ և բազկին տե-
րութ իւրով . ահաւասիկ վարձք իւր ընդ իւր . և
գործք առաջի նո՛ : Իբրև հովիւ մի հովուեսցէ
զխաշինս իւր . և բազկաւ իւրով ժողովեսցէ
զգառինս . և՛ի ծոց իւր կրեսցէ զնո՛ . և մխիթար
լեսցի յղեացս : Ո՞ չափեաց ափով իւրով զջուրս ,

և

և վերկինն ծագաւ՝ և վերկիր ամ քալաւ. ո՞ կշռեաց զերկինս կշռով, և զգաշտս կշռովգօք։ Ո՞ գիտաց զմիտս Տեառն. և ո՞ եղև նմա խորհրդակից՝ եթէ խնդամուտ արասցէ զնա։ Կամ ընդ ո՞ւմ խորհեցաւ՝ և արար զնա խնդամուտ. կամ ո՞ եցոյց նմա զդատաստան՝ և զճանապարհս իմաստուէ. կամ ո՞ եւս նմա փոխ յառաջագոյն՝ և հատուցանիցէ նմա։ Նթէ ամ հեթանոսք իբրև վխամիլ մի՛ ի գուլէ են, և իբրև զմետ մի՛ ի կշռոց համարեցան. և իբրև չնիք՝ի բերանոյ համարեսցին։ Նթէ Լիբանան չէ բաւական յայրումն. և ամ գորգոտանիք չեն բաւական յողջակէզս։ Նա ամ հեթանոսք ոչինչ են. և յոչինչ համարեցան նմա։ 17։

Ասա. Ուղիղ եղեցին ազօթք իմ։

Բէթ. Աղաչեցուք. կ՛գանչ։

Ամբակում ԵՒ։

Ընդհանուր մեզ Տէր արժնուի ընդ իմաստուն կուսանացն. և զհոգւոց մերոց լապտերս պայծառացո։ Արկինչնիք՝ի քէն Տեր զարհուրելաք՝ի պատասխանւոյն. զամէնն ասելով եթէ ոչ գիտեմ զձեզ։ Յորժամ գաս փառօք՝ օր գատել զաւիեզերս ամ. զնորհաւ և մեզ Տէր կալ՝ի յաջմէ քումմէ։ Նացցի մեզ դուռն ողորմուէ երկնաւոր փեսային, և մտցուք՝ի յառագաստ ընդ իմաստուն կուսանան։ փառս՝ օր։ Ժամանեսցուք ընդ առաջ փեսային և մտցուք՝ի յառագաստ նորա. զի մի՛ անասցուք արտաքս որպէս զլիմար կուսանան։ Այո՛ ես ինչ։ Պայծառաց-

յին լապտերը հոգւոց մերոց, և բազմեցուսցես զմեզ ընդ հրաւիրեալսն 'ի կոչումն արքայութեանդ երկնից:

Բեղ. Ա՛ խաղաղութեամբ: Ղեկ. Հայր գիտած:

Ապա ասդրէն Սաղմոս ողբոյն է:

Ո՞ր քեզ Տի՛ համբարձի զանձն իմ. Ա՛ստ իմ 'ի քեզ յուսացայ. մի՛ ամաչեցից, և մի՛ ծիծաղեսցին զիս թշնամիք իմ:

Ամենեքեան այք համբերեն քեզ՝ մի՛ ամաչեսցեն. այլ ամաչեսցեն անօրէնք յունայնութեան իւրեանց:

Օճանապարհս քո Տի՛ ցոյց ինձ. և զշաւիղս քո ուսո՛ ինձ:

Առաջնորդեա՛ ինձ 'ի ճշմարտութիւնդ քումմ, և ուսո՛ զիս. զի դու ես Ա՛ստ փրկիչ իմ. և ես քեզ համբերեմ զօրհանապազ:

Յիշեա՛ Տի՛ զգթութիւնս քո՝ և զողորմութիւնդ քո՝ որ են յաւիտենից:

Զմեղս մանկութե՛ և զանգիտութե՛ իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա՛ զիս Տի՛ ըստ ողորմութե՛ քումմ, վա՛ք քաղցրութե՛ քո. զի քաղցր և ուղիղ ես Տէր:

Ա՛ստ այսորիկ օրէնսփո՛ս առնիցես զմեղաւորս 'ի ճանապարհի. առաջնորդես հեզոց 'ի դատաստանի, և ուսուցանես հեզոց զճանապարհս քո:

Ա՛ստ ճանապարհք Տի՛ն ողորմութի՛ և ճշմարտութի՛ն այնոցիկ, որք խնդրեն զուխտս և զվկայութի՛ նորա:

Վա՛ն անուան քո Տի՛ քաւեա՛ զմեղս իմ, զի բա՛զմ եղեն. ո՞վ է մարդ որ երկնչի 'ի Տի՛նէ, օրէնս-

գետ

դէտ առնէ զնա ՚ի ճանապարհի՝ յոր և հաճե-
ցաւ :
Ընձն նր՚ի բարուէ հանգիցէ . և զաւակ նր ժա-
ռանգեսցէ զերկիր :
Օջրուէ է Տր երկիւղածաց իւրոց . և զկտակա-
րանս իւր ուսուցանէ նց :
Աչք իմ յամ ժամ առ Տր . և նա հանէ յորո-
գայթէ զոտս իմ :
Դարձիր առ իս , և ողորմեայ ինձ . զի միամօր և
աղքատ եմ ես :
Նեղուխք սրտի իմոյ բազմ եղեն յոյժ . և ՚ի վշտաց
իմոց հան զես :
Տես զնուաստութիւն իմ և զվաստակ իմ . և թող
ինձ զամ մեղս իմ :
Տես զթշնամիսն՝ զի բազում եղեն . ատելուի զոր
՚ի նանիր ատեցին զես :
Պահեա զանձն իմ , և փրկեա զես , և մի յամօթ
եղէց՝ զի յուսացայ ՚ի քեզ :
Ամբիծք և ուղիղք կցորդք եղեն ինձ . և ես քեզ
համբերի զօրհնասպաս . փրկեա Ած զԻսրայէլ
յամ նեղուեց նր :

## ՕՒՆՒ ՈՐԹԻՒ :

Սկզբ Ա-հետալանիս որ ըստ Ա-ատթէոսի :
կէ . 1 :

## Տէրն մեր Տ ՎՒՏ

Ա-ւ եղեալ արտաքս ՚ի տաճարէն գնայր , և մա-
տեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս
տաճարին : Ա-ւ նա պատասխանի ետ և ասէ ցնս.
տեսանէք զայդ ամ , ամէն ասեմ ձեզ , ոչ մնասցէ
այդր

այդը քալ ի քարի վը՝ որ ոչ քախեսցի : Եւ մինչդեռ նատէր ի լերինն Հիմնենաց, մատեան առնա աշակերտքն առանձինն և ասեն. ասա մեզ՝ ե՞րբ լինիցի այդ. և կի՞ զի՞նչ նշան իսկ գոյ գալստեանն, և վախճանի աշխարհիս : Պատասխանի եւ Յն՝ և ասէ ցնս. զգոյշ լերուք՝ գուցէ ոք զձեզ խաբիցէ : Զի բազք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Քրն. և զբազմս մոլորեցուցանիցեն : Լսելոց էք պատերազմունս՝ և համբաւս պատերազմաց. զգոյշ լերուք՝ մի ճառակեսջիք, զի պարտ է լինել այմ ամի, այլ չէ է կատարած : Յարիցէ ազգ յազգի վը, և թագաւորութիւն ի թագաւորութիւն վը. և եղիցին տալք և սրածուխք և սաստանութիւնք ի տեղիս տեղիս : Սկսան և այն ամ սկիզբն է երկանց : Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւն, և սպանանիցեն զձեզ . և եղիջիք ատելեալք յամ ազգաց վը անուանն իմոյ : Եւ յայնժամ գայթակղեսցեն բազք, և զմիմեանս մատնեսցեն՝ և ատեսցեն զմիմեանս : Եւ բազմ սուտ մարգարէք յարիցեն, և զբազմս մոլորեցուսցեն : Եւ վը բազմանալոյ անօրէնութեն, ցամաքեսցի սէր բազմաց : Այլ որ համբերեացն իսպառ, նա կեցցէ : Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեանս ամ տիեզերս՝ ի վկայութիւն ամ հեթանոսաց, և ապա եկեսցէ կատարած : Զրդ՝ յորժամ տեսանիցէք զգարշուճի աւերածոյն, որ ասացեաւն է ի ձեռն Դանիէլի մարգարէի, զի կայցէ ի տեղւոյն սրբութեան . որ ընթեռնուն՝ ի միտ առցէ : Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լերինս . և որ ի տանիս կայցէ, մի իջցէ առնուլ

ինչ

քինէ ՚ի տանէ իւրմէ ։ Եւ որ յանդի իցէ, մի դարձցի յետս առնուլ զձորձս իւր ։ Ոայց վայ իցէ յղեաց և առաւաց յաւուրան յայնոսիկ ։ Յաղօթս կացէք՝ զի մի լինիցի փախուստն ձեր ձմերան, և մի ՚ի շաբաթու ։ Օ՛ի եղիցի յայնժամ նեղութի մեծ, որպիսի ոչ եղև ՚ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ, և ոչ այլ լինի ։ Եւ եթէ ոչ կարճեին աւուրքն այնոքիկ, ոչ ապրեր ամ մարմին, բայց վն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ ։ Յայնժամ թէ որ ասիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Քրիստոս կամ անդ, մի հաւատայցէք ։ Օ՛ի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տացեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչև մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն ։ Ահա յառաջագոյն ասացի ձեզ ։ Ապա եթէ ասիցեն ձեզ, ահաւասիկ յանապատի է, մի ելանիցէք, և թէ ահա յշտեմարանս է, մի հաւատայցէք ։ Օ՛ի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ ։ Օ՛ի ուր գիշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք ։ Այլ յաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տայցէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւք երկնից շարժեսցին ։ Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամ ազգք, և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառաւք բազմաւք ։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողիւ մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նո՛ր ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մինչև ՚ի ծագս նոցա ։

Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նո՛ր ոստքն կակղասցին և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն: Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ, գիտասջիք թէ մերձ է ի դուրս: Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամ եղիցի: Երկինքն և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն: Նայց վասն աւուրն այնորիկ և ժամուն, ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ Որդի՝ բայց միայն Հայր: Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն որդւոյ մարդոյ: Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին՝ կանայս առնէին և արանց լինէին, մինչև յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն, և ոչ գիտացին՝ մինչև եկն ջրհեղեղն և եթարձ զամենեսին, այնպէս եղիցի և գալուստն որդւոյ մարդոյ: Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առցի՝ և միւսն թողցի: Եւ եթէ երկու աղացանն ի մի երկանս, մին առցի՝ և միւսն թողցի: Երթուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ: Զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ, սկէր՝ և ոչ տայր ակառն հատանել զտան իւրոյ: Ա՛ր այսորիկ և դուք եղերո՛ւք պատրաստ, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ: Ասէ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և խնամարուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու: Երանի է ծառայնն այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս: Ամէն ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա: Ապա թէ ասիցէ ծոյլ

չար՝ի տրտի իւրում, տէր իմ յամե զգաշ. և ականիցի հարկանել զծառայակիցս իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս։ Գայցէ տէր ծառային այնորիկ յաւուր յորում ոչ ակն ունիցի, և՝ի ժամու յորում ոչ գիտիցէ, և կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին նր ընդ կեղծաւորս դիցէ։ Ընդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Այնժամ նմանեսցի արքայութի երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային և հարսին։ Էին զն՝ի նոցանէ յիմարք էին և հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց։ Եւ՝ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և՝ի քուն մտին։ Եւ՝ի մէջ գիշերի եղև բարբառ, ահա փեսայ գայ՝ արիք ընդ առաջ նր։ Յայնժամ յարեան ամ կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն, տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք՝ի վաճառականն և գնեսջիք ձեզ։ Երբև նք գնացին գնել՝ եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա՝ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռն։ Յետոյ գան և այլ կուսանքն՝ և ասեն. տ՛ր տ՛ր բաց մեզ։ Եւ պատասխանի ետ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։ Արթո՛ւն կացէք՝ զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն։ Ապ այր մի գնացեալ՝ի տարաշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ և ետ նոքա զինչս իւր։ Եւ ումեմն ետ հինգ քսակաց՝ և ումեմն երկուս՝

ուանձն մի, իբրաքանչիւր ըստ իւրում՝ կարի, և դնաց: Զորաւ վաղվաղակի՝ որ առ ձիովքն՝ դորձեաց նոքօք, և շահեցաւ այլ ևս հինգ: Նոյնպես և որ զերկուան, շահեցաւ այլ ևս երկուս: Եւ որ զմին առ՝ գնաց փորեաց զերկիր, և թագոյց զարծաթ տեառն իւրոյ: Յետ բազմ ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ՝ և առնէ համարս ի մէջ նոցա: Եւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ ևս հինգ քանքար՝ և ասէ. տէր՝ հինգ քանքար ետուր ինձ, արդ՝ աւասիկ հինգ այլ ևս քանքար՝ ի մէ շահեցայ: Ասէ ցնա տէրն իւր. աղնիւ ծառ՝ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմի կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն քո: Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր՝ և ասէ. տէր՝ երկուս քանքարս ետուր ինձ, ահաւասիկ երկուս ևս այլ քանքարս՝ զոր ի մէ շահեցայ: Ասէ ցնա տէրն իւր. աղնիւ ծառ՝ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմի կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն քո: Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. տէր՝ գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր. երկեայ՝ գնացի և թագուցի զքանքարն քո յերկրի. արդ՝ աւասիկ քոյդ ունիս զքեզ: Պատասխանի ետ տէրն՝ և ասէ ցնա. ծառայ չար և վատ՝ գիտէիր եթէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, և ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի. պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսօք պահանջէի զնմանէ: Արդ՝ առէք ի դմանէ զքանքարդ՝ և տուք այնմ

այնմ որ ունիցի զտասն քանքարն։ Օ՛ի ասի որ
ունիցի՝ տացի և յաւելցի, և որ ոչն ունիցի՝ և
զոր ունիցին, բարձցի ՚ի նմանէ։ Եւ զծառայդ
անպիտան հանէք ՚ի խաւարն արտաքին. անդ է-
ղիցի լալ և կրճել ատամանց։ Եւ յորժամ է՛
կեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք՝ և ամ հրեշ-
տակք ընդ նմ, յայնժամ նստցի յաթոռ փա-
ռաց իւրոց։ Եւ ժողովեսցին առաջի նո՛ ամ ազգք,
և մեկնեսցէ զնո՛ ՚ի միմեանց, ոյք հովիւ զի մեկ-
նեսցէ զոչխս յայծեաց։ Եւ կացուսցէ զոչխան
ընդ աջմէ իւրմէ՝ և զայծեան ՚ի ձախմէ։ Յայն-
ժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն
իցեն. եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգե-
ցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն ՚ի սկզբա-
նէ աշխարհի։ Օ՛ի քաղցեայ՝ և եատուք ինձ ու-
տել. ծարաւեցի՝ և արբուցէք ինձ. օտար էի՝ և
ժողովեցէք զիս. մերկ՝ և զգեցուցէք զիս. հիւանդ
էի՝ և տեսէք զիս. ՚ի բանտի էի՝ և եկէք առ իս։
Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն
և ասասցեն. եր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝
և կերակրեցաք, կա՛մ ծարաւի՝ և արբուցաք։ Ե՞րբ
տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք, կա՛մ մերկ՝ և
զգեցուցաք։ Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ՝ կա՛մ ի
բանտի, և եկաք առ քեզ։ Պատասխանի տա-
ցէ թագաւորն՝ և ասասցէ ցնո. ամէն ասեմ
ձեզ, որովհետև արարիք միում յեղբարցս այ-
սոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք։ Յայնժամ ա-
ասասցէ և ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն. եր-
թայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենա-
կան, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտա-
կաց նո՛ա։ Օ՛ի քաղցեայ՝ և ոչ եատուք ինձ ուտել,

ծարաւեցի՝ և ոչ արբուցիք զիս, օտար էի՝ և ոչ ժողովեցիք զիս, մերկ էի՝ և ոչ զգեցուցիք զիս, հիւանդ՝ և ի բանտի՝ և ոչ տեսիք զիս: Յայնժամ պատասխանի տացեն և նոքա՝ և ասասցեն. ա՛ր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ի բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ: Յայնժամ պատասխանի տացէ նոցա՝ և ասասցէ. ամէն ասեմ ձեզ, որովհետև ոչ արարէք միում ի փոքրկանցս յայսցանէ՝ և ոչ ինձ արարէք: Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս, և արդարքն ի կեանսն յաւիտենականս: Եւ եղև իբրև կատարեաց Յն զամս զեռնս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր: Գիտէք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի. և որդի մարդոյ մատնի ի խաչ ելանել:

ԿԴ. 2:

Վրէպ. Խնդրեցուք: Կեցո՛ Նիւ: Աղջիկ. փոխ. գաւառ խաղաղութեան:

Եւ ապրիլն:



# Ե Ւ Ե Գ

# ՀՈՐԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ԵՒԼԻՒՆ ՕՐՀՆՈՒԱԾ ԳՅ



ՈՐ ՅԵԹՈՒՆ ՓԱՌՅՅ բազմեալ ընդ Հօր անսկզբնա-
կից բանդ . այսօր բազմիլ ընդ
Հոդեգինան յանձն առեր . օրհնեմք զեկեալդ ի
փրկութիւն աշխարհի : Որ անճառ յաճուրեամբդ
օծեալ զքո ծառայական կերպ . այսօր հաճեցար
օծանիլ իւղով ի ձեղաւորաց . օրհնեմք զքէ : Որ
կենարար թաղման քո գուշակ զիւղին ծանու-
ցեր զօծումն . այսօր Յուդայիկ յայտնեցաւ խոր-
հուրդ այծամեսիրութեան . օրհնե :

Որ խորհրդեամբ քոյդ Հօր և Հոգւոյն ապար ի
պատկեր իւր զմարդն առաքին . այսօր որդիք
մարդկան ժողովեալ խորհին մատնել ի մահ զՈ-
ղին Աշ : Յուդա սիրոյն աշակերտ փոխանակեաց

զատեալսն ի մարդասիրին. մատանելով քահանայիցն ընդ երեսսն արծաթով:

Ալ երանգաւոր երկնից մշանջենաւոր Հօր Որդին ներգործեալ իմովս ի վեր քան զհրաշ՝ ծառայի առեալ զկերպ անկողոպատելի աճումեամբն: Նա նին զմաքրեցելոցն ջրով զոտս լուանայր. զի զհանարհումի ի նն տպաւորեսցէ. Նորոգու թեանն գոլ օրինին: Նաշխէ զմարմին իւր և զարիւն նոր ուխտ անուանեալ, և յիշատակ կատարումն մահուանն, մերձեցելոցս ի նա սրբու թեամբ:

Երկոդ զոյս որպէս զօրինոց այսօր անճառ խոնարհութիւն ի վերնատունն խորհրդոյ զգեստ ծառայի սփածանիլ յանձն առեր. օրհնեմք զեկեալդ ի կամաւոր չարչարանս: Որում երկրպագեն դասք հրեշտակաց խոնարհեցար ի լուանալ զոտս հողեղենս. բժշկել սոքօք զգայրշապարս նախահօրն. բժշկեա զհոգւոյ խնդ զհիւանդութիւնս: Որ'ի խորհուրդս փրկականս նկեղեցւոյ քաշխեցեր աշակերտացն զմարմինդ քո նորոգելով զմահացեալսն ի ճաշակմանէ. հաղորդս այսմ ընկալ զմեզ միայն մարդասէր:

Ար անսկիզբն յեսուեդ ես Էջ. այսօր զգեցար զգեստ հողեղէն ծառայի՝ ծածկելով զմերկութիւն նախահօրն. օրհնեալ եկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան: Որ վերօրհնեա ի հրեղէն քերովբէից՝ այսօր եկեր կամաւ ի վերնատունն խորհրդոյ. լուացեր զաշակերտսն յօրինակ վանցել. օրհնեալ եկ Որ յամենս փառաց նախ ընդՀօր. այսօր քաշխելով ընդ աշակերտսն յանձն առեր. քաշխելով զմարմին և զարիւն քո սուրբ. օրհնեալ:

Նկեղ

Ակնարդ ի փրկուի աղքի մարդկան. ի ծառայէ
յանձն առնու մանիլ ի դատաստան. համ-
բերելով վե զմեզ կեցուցանել: Առատնալ Պե-
ղատոսի ոչ մնհատարտ. ի Հրէայն և ի Կայի-
ափայ դատապարտեալ. համ: Կացեալ ի յա-
ւետնի երկրորդ Գամ վե առաքլինն Գամայ պար-
ւեացն Թողութեն. համ:

Գ Ընթացան արդարոնե Հրէայ ծագեալ յաշխարհ
Հայածեաց զնաւարն անգիտուե. և յետ մահու
և յարուե Համբարձաւ առ Հայր յորմէ ծա-
գեաց. որ երկրպագի յերկնաւորաց և յերկ-
րաւորաց ընդ Հօր և ընդ Հոգւոյն. միշ և մեք եր-
կիրպագանեմք Հօր Հոգւով և ճշմարտութ: Որ
փոխանակ ծոցածին բանին որ եղ յերկինս՝ ա-
ռաքեցաւ աւետիքն Հօր ի բարձանց Հոգին
ճշմարտուե. մխիթարել զորս յԳամայ տրամե-
ցիոց և հրաշինել զընտրեալ զդաստ առաքելոցն
պետրոս: Ընտր տրամական և պիշեղ այնն լուծան
երկունք ծննդեան նախամօրն. քանզի զծնեալն
մարմնով ի մահ և յատականաւի վերստին ծնա-
նի Հոգին յորդիս լուսոյ Հօրն երկնաւորի. վասն
որոյ:

Դ Ի ձայն մեծի զանարձնոյն և ի հնչումն հրա-
շալի փողոյն, ուր հողացեալ մարմինք մարդկան
նորոգին. յայնմ աւուր ահեղին յիշեա Տէր և
զմեր զնկճեցեալսն, և Հանգո ընդ նոսա քո: Հոր-
ժամ նշան երևունեան ճառագայթիւք փայլի, և
թագաւորդ լծագաւորաց փառօք տեսանի. յայնմ
աւ: Հորժամ առեան դատաստանի դնի. և
դպրուիք հրաշեցն բանին. յայնմ:

Ա. Յաւր Վարդիկ ցնծութ երգեաց սրտով կո-
չեն աւետիս բերկրեանց առեալ . որ ծնաւ
զերկիւղ անձանց մերոց : Ընթաւելին երկնի և
երկրի ի կաւականն յարգանդէ մեզ կեանք յայտ-
նեցաւ՝ Ընդ այցելու մարդկան : Զաւրաց
ընծայ փայլուն լուսատեսիլ աստեղն . մոգուցն
հետևելով նշանի ի ծնունդ ածողոյն :

Ա. Յաւր ցնծան դաւք հրեշտակաց ընդ հաստա-
տիլ քո ի յերկրի ով լուսերէն խորան երկնա-
նման եկեղեցի մեր . ուրանկ լեր վկայ պատմական՝
հովանի մեր և յոյս : Օրհնաբանութիւն հարցն ա-
նարատ աբօղ արկուալ վայելչատես . զարդարեալ
հանդերձ փառաց և ևդ քնդ աւազ երկնաւոր փե-
սային . ուրանկ լեր ամուլ բազմածին՝ ահա փե-
սային գայ առ քեզ : Փոխ՝ Ջօր : Ընտանեօր հարս-
գնացաւ մեզ աւազան միրուռն յորդումն մեր
Ջողովմն յղացեալ ծնանելով վերստին դհա-
ւատացեալսն ի Քրիստ . ուրանկ լեր անմայր յա-
ռաջնումն՝ ահա Որդին գայ առ քեզ :

Ա՛ժմ և Յէր :

Որ զամ անօրինաբար կամաւ յանձն առեր
փրկիլ ընդ մեզաւորացս . վն անձնաւ խոնարհու-
թեանդ քո և մեզ ողորմեաց :

Փակ. փառք հրաշափառ սէրուն : Վ.Ջ. Ալ
ի գերեզմն : Ալ. Ի գերեզմն և ի տապանեան :

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :

Որ ուսեր զհաց իմ յարձակեաց առնել ինձ
խաբէութիւն :

Ալէ դու Տէր ողորմեա ինձ . և կանգնեա զիս . և
ես հատուցից նմա :

Ալէ-

Ալէլուիա . ալէլուիա . ալէլուիա :
Իսրայելացան և խաչեցան զչարուն . և զապիրա-
ւուն ի բարձունս խորհեցան :
Եդին յերկինս զբերանս իւրեանց . և զլեզուս
իւրեանց ածէին զերկիրս :
Փառք Հօր . այժմ և . ապել :

Աղէ . ի դիշերի և ի տունջևան :

Ցառաւօտուան Հոգի կէ :

Որ խորհրդոց ես Տէր Աստ անմահ . զծածկեալ
խորհուրդ չարին ապականեալ վանեա . զքեզ օրհնեմք Աստ հարցն մերոց : Որ զնախանձն Աբրահամու զհանդէս խորագոյնս ծանուցեր աւետեաց Որդւոյն պատուհաս . զքեզ օրհ : Որ շնորհես ծածկելոց յայտնի գոլ . Յուդաս արծաթասէր զանհաւատելիդ մատներ . զքեզ : Օրհնեցեք ամ գործք Տէր զՏէր . օրհնեցեք և բարձր սրտիւք զնա յաւիտեան : Փառս Հօր : Ո՛վ բնակեալն ի վերին զօրսն ծածկապէս խորհուրդ քահանայքն հոգունել վաճառեին զԱստ . և բարձր :
Այժմ և Ցդեղ : Որ մի մեր համբերութեանց բանասիրեալ
ոչխին համաւ վաճառի բանն . և բարձր :

Աւետարանչական :

Ածծին երիսնեցին դուռն՝ ածելին ձայնիւն
աւետարանէր հրեշտակն . ուրախ լեր բերկրեալդ
Տէր ընդ քեզ : Փառս Հօր : Ի քերովբէս բազմեալ ընդ Հօր անապականաբար բնակիլ հաճեցաւ ի քում որովայնի . ուր : Այժմ և Ցդեղ : Որ
բոցկ-

քոցեղէն սրտմբեխիք շրջափակեալ պահիւր. այսօր ՚ի մէջ մարդկան ՚ի գիրկս հողեղէնի յայտնեալ. ուրախ:

## Ովքրէ՛ գէյ:

Օ՜ քէն խորհեցան ՚ի չարուն Ը՜ յաւիտենից՝ որ բանիւ զարարածս խորհրդով հիմնեցուցեր: փոխ՛ ՚ՀՕՐ: Օ՜քեզ որ արարիչդ ես միծուքեան՝ արձանիդ վաճառէին. յանձն առեր զնմ համբերելով վասն մեր: Ը՜յեյ Ն՜ հիշ: Օ՜քեզ որ թագաւոր թագաւորաց՝ ՚ի ծառայէ զատապարտեալ. զի զմեզ փրկեսցես ՚ի յանիծից Ադամայ:

## Տէր ալէյնկ գէյ:

Ա՜յսօր նկեալ կամաւ փրկիչն առ ՚ի մատնիչ յանօրէն ժողովրդէն վասն փրկութեանս հեթանոսաց: փոխ՛ ՚ՀՕՐ: Ա՜յսօր մատնի բանն ՚ի բանաւոր հօտէ. և յառաջնոց դատապարտի յանօրինաց ժողովրդէն՝ վասն փրկու: Ը՜յեյ Ն՜ հիշ. Ա՜յսօր հոգին զՏէրն դատապարտէ. և արծաթոյ վաճառի արարիչն արարածոց վասն:

## Ը՜——ՕՐԻՆ ԷրԷ:

Խորհեցան, և խօսեցան զչարութիւն. և զապիրատութիւն ՚ի բարձունս խորհեցան: Նդին յերկինս զբերանս իւրեանց. և զլեզուս իւրեանց ածէին ի երկրա:

## Ալէլ. փառաւորեսցուք. կամ զանձ:

"Վասն զի զանգիտիք այսօր տեսանել ձեր յաշխարհի ի մէջ հողեղինաց, որպարծիք ապարչին սպասնուլեն խորհին վնասուրդ: Փոխ ՚ի օր որ բասնիէն իւրով զերկինս և զերկիրս հաստատեաց յոյնչէ գոյացուցեալ. վաճառի այսօր դիւրագին ընդ երեսան արծաթոյ: Ելյ ՚ի ՚ի ՚ի: Ով հնազդաս արտասանելի երկնաւոր վարդապետին սպասնուն խորհի զնստուրդ. մտանելով անօրինաց՝ զի խաչեսցի ՚ի մէջ երկրի:

Ա-ա Ա-ՐԵՂ. Ա՛ խաղաղութեն: Ա-ՂԸ-. Ա՛ն ես աէր:

Ա-ա Ա-ՂՈՈ ԱՂԷՈՅԱՆ. Ե:

Որ ուսեր ընդ իս հաց. յամախսաց առնել ինձ խաբէութիւն: ՀՒ.

Երանի որ խորհի զաղքատն և զանանկն. յաւուր չարի փրկէ զնա Տէր: ՓԿ.

Տէր փրկէ զնա և կեցուցանէ. երանելի առնէ ՚ի վերն երկրի, և ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց:

Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց, զամ անկողինս նորա դարձուցանէ ՚ի հիւանդութիւն նէ:

Ես ասացի Տէր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ:

Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ իցէ զի մեռցի և կորիցէ անուն նէ:

Մտանէր տեսանել զնանրուն. խօսէր ՚ի սրտի իւրում. ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր:

Ըս-

Ըրտաքս եղաներ և գնդյն խօսեր . զինեն շշնջէին
ամ թշնամիք իմ :
Ատրհեցան չար ի վէր իմ . բան անօրէնութ եղ
դին ի վերայ իմ :
Ահեկ որ ննջեցեն ոչ ևս յարեղուցու յատնիչ
քանզի և այրն խաղաղութե իմոյ յոր և եհաս
յուսացայ :
Որ ուտէր ընդ իս հաց . յարձակեաց առնել ինձ
խարէութ :
Էյլ դու Տէր ողորմեա ինձ . կանգնեա զիս , և
հատուցից նոցա :
Գայսմ ծանեայ թէ հաճեցար ընդ իս . զի մի
ուրախ եղիցեն յիս թշնամիք իմ :
Էյլ զիս յամբծուն իմում ընկալար , հաստա-
տեցեր զիս առաջի քո յաւիտեան :
Օրհնեալ Տէր Ած Իսկի յաւիտեանս յաւիտե-
նից . եղիցի եղիցի :

## Ողն Որթիւ .

Առ Եղեստրանիս որ ըստ Աքրկոսի .
ժ-ք . ւ :

### Ողոյն մեր Ած Ուս

Ք՝ ե էր զատիկն և թաղարջակերք յետ երկուց
աւուրց . խնդրէին քահանայապետքն և դպիրք՝
եթէ գիարդ զնա ծիծաղս կալեալ սպանանիցեն :
Ասէր ասէին՝ թէ մի ի տօնի աստ , զի մի խոռո-
ջալիք լինիցի ի ժողովրդեանն : Եւ մինչ էր ի
Ներմանիա ի տան Սիմոնի բորոտի բազմեալ ,
եկն կին մի որ ունէր շիշ խղճ նարդեան ազ-
նուի մեծագնոյ , և բեկեալ զշիշն՝ եհեղ ի վէր
գլխոյ

գինոյ ներ: Եւ աշակերտքն զտարեին և առեին. ընդ-
ընդ նովաւ կարուստ իւղոյ սպրդիկ: Անկե
էր զայգ իւղ վաճառել աւելի քան երեք հա-
րիւր դահեկանի, և տալ աղքատաց. և զայրա-
նային նմ: ՅոյԺ: Եւ Յս ասէ ցնս. Թոյլ տուք
դմա՝ զի աշխատ առնէ ք, զի գործ մի բարի գոր-
ծեաց դա յիս: Զամ ժամ զաղքատս ընդ ձեզ
ունիք, և յորժամ կամիք՝ կարող էք առնել նց
բարիս. այլ զիս ոչ յամ ժամ ընդ ձեզ ունիք:
Դա զոր ունէրդ՝ արար. յառաջագոյն ննչեաց
զմարմին իմ ի նշան պատանաց: Ամէն ասեմ
ձեզ. ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ
ամ աշխարհ, և զոր արար դա՝ խօսեսցի վն յի-
շատակի գորին: Եւ Յուդա Ակարիոտացի միւոր-
կոտասանից անտի, գնաց առ քահանայապետսն
զի մատնեսցէ զնա նց: Նորա իբրև լսեան խնդա-
ցին, և խոստացան տալ նմ արծաթ: Եւ խնդրէր
թէ զիարդ պարապով մատնեսցէ զնս: ԺԱ:

Նրգ. Խաւարն անգոյ:

Ռբշ. Խնդրեսցուք: Կեցո՛ զնս: Ընդ. Ռամ
ամենազօր և հրաշալի տէրութեդ:

Յեբելոյին ի պատն ձանն ասէ. Խոնարհեցո՛, ով
Ասպետ:

Ասեսդէ:

Կայեաց, և լուր ինձ Տէր Ընդ իմ:
Մինչև յիւրք Տէր մոռանաս զիս խոպան,
մինչև յիւրք դարձուցանես զերեսս քո յինէն:
Ընդ-

Ընթերցուածս ի ծննդոց։

ԺԸ. 1։

Եւ երևեցաւ Ած (Աբրահամու) առ կաղ-
նեաւն Մամբրէի, մինչդեռ նստէր առ դուռս խո-
րանին իբրոյ ի միջօրէի։ Աչս իւր
և տեսի. և ահա արք երիք կային ի վերոյ քան
զնա. և իբրև տեսի՝ ընթացաւ ընդ առաջ նոցա ի
դրանէ խորանին իւրոյ. և երկիր նայեցաւ ի վե՛ր
րի և ասէ։ Տէր եթէ գտի շնորհս առաջի քո.
մի՛ զանց առներ ի ծառայէ քումմէ։ Այլ առիցի
սակաւ մի ջուր. և լուացեն զոտս ձեր. և զովաս-
ջիք ընդ ծառոյն։ Եւ առիցե՛ հաց՝ և կերիջիք. և
ապա երթիջիք զճանապարհ ձեր. փոխանակ որ
դարձայք առ ծո՛յ ձեր։ Եւ ասեն՝ այդպէս ա-
րա՛, ոյնպէս առացիր։ Եւ աւետեցաւ Աբրահամ ի
խորանն առ Սարրա. և ասէ ցնա. փութա՛ և
թրեա զրիւս երիս ալեր նաշհոյ. և արա՛ նկա-
նակս։ Եւ յանդիմայ ընթացաւ Աբրահամ. և
էառ որթ մի մատաղ և բարի. և ետ ցպատա-
նին. և փութացոյց վաղվաղակի հատուցանել։
Եւ էառ կոպի և կաթն. և զորթն զոր հատոյց.
և եդ առաջի նո՛ և կերին. և նա կայր առաջի
նո՛ ընդ ծառայի։ Եւ ասեն ցնա. Ո՞ւր է Սարրա
կին քո. Նա պատասխանի եա՛ և ասէ. ահաւա-
նիկ ի խորանի անդ է։ Եւ ասէ. դարձեալ ե-
կից առ քեզ ի ժամանակի յայսմիկ ի տո՛ն
աւուրս. և ունիցի որդի Սարրա կին քո։ Եւ
Սարրա ունկնդնէր առ դրան խորանին. քանզի
յետոյ նո՛ կայր։ Եւ Աբրահամ և Սարրա ծե-
րացեալք էին. և անցեալք զաւուրսք. և պակա-

սեալ

սեալ էր ի Սարրայէ լինել ի կանանց օրինի։
Ասիծաղեցաւ Սարրա ընդ միտս, և ասէ. ոչ
ինչ ցայժմ ոչ եղև ինձ, այդ լինիցի՞. և տէր
իմ ծերացեալ է։ Եւ ասէ Տէր ցԱբրահամ. զի՞
է զի ծիծաղեցաւ Սարրա ընդ միտս իւր՝ և ա-
սէ. Թէ արդարև ծնանիցիմ. զի ահա ես պա-
ռաւեալ եմ։ Միթէ տկարանայցէ՞ առ ՅԱստուած
ի ժամանակիս յայսմիկ դարձայց առ քեզ ի
տոյն աւուրս. և եղիցի Սարրայի որդի։ Ուխտեաց
Սարրա, և ասէ Թէ ոչ ծիծաղեցայ. քանզի եր-
կեաւ։ Եւ ասէ. ոչ այդպէս է. այլ ծիծաղե-
ցար։ Եւ յարուցեալ անտի արանցն Հոյեցան ընդ
երեսս սոդովմայեցւոցն և գոմորացւոց. և Աբրա-
համ երթայր ընդ նմ՝ յուղարկել զնոսա։ Եւ ա-
սէ Տէր. միթէ ծածուսա ինչ իցէ յԱբրահամէ
ծնեալ իմմէ, զոր ինչ գործելոց եմ։ Այլ Աբրա-
համ լինելով եղիցի յազգ մեծ և ի բազմ. և օրհ-
նեսցին ի նա ամ ազգք երկրի։ Վասնզի գի-
տէի եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց և տան
իւրոյ յետ իւր. պահել զճանապարհս Տն և
առնել զարդարութի և զիրաւունս. և ածցէ Տէր
Աբ ի վե Աբրահամու զամ, զոր խօսեցաւ ընդ
նմա։ Եւ ասէ Տէր. աղաղակ սոդովմացւոց և
գոմորացւոց յաճախեաց. և մեղք նց մեծացան
յոյժ։ Եւ արդ իջեալ տեսից. եթէ ըստ աղաղա-
կին նց որ հիան հասանէ՝ վճարիցեն. ապա թէ
ոչ՝ զի գիտասից։ Եւ դարձեալ արանցն անտի
եկին ի Սոդոմ. և Աբրահամ կայր առաջի Տն։
Եւ մատուցեալ Աբրահամ ասէր. միթէ կորու-
սանիցես գարդարն ընդ ամպարշտին. և լինիցի
արդարն իբրև զամպարիշտն։ Միթէ իցեն յիսուն

ար-

արդար ՚ի քաղաքի՝ կորուսանիցե՞ս զնա. և ոչ
նախիցես ամ տեղեացն վէ յիսուն արդարոցն ե-
թէ ինչո ՚ի նմա: Հաւա՛ւ լիցի քեզ առնել գոյն
քան. սպանանել զարդարն ընդ ամպարշտի. և
լինիցի արդարն իբրև զամպարիշտն. քա՛ւ լիցի
քեզ՝ որ դատես զամ երկիր. ոչ արասցես զայն
դատաստան: Եւ ասէ Տէր. եթէ գտայ ՚ի Սոդոմ
յիսուն արդար ՚ի քաղաքի անդ, թողացուցից
ամ տեղեացն վէ նոցա: Պատասխանի ետ Աբրա-
համ, և ասէ. այժմ սկսայ խօսիլ ընդ Տէր.
քայց ես հող եմ՝ և մոխիր: Եթէ պակասիցին
քան զյիսուն արդար՝ հնգիւ չափ, կորուսանիցե՞
զամ վէ հնգից զամ քաղաքն: Եւ ասէ՝ ոչ
կորուսից՝ եթէ գտցի անդ քառասուն և հինգ:
Եւ յաւելեալ ևս խօսիլ ընդ նմա՝ և ասէ. իսկ ե-
թէ գտցի անդ քառասուն: Եւ ասէ՝ ոչ կորու-
սից վէ քառասնից: Եւ ասէ՝ միթէ բարկ ինչ
Տէր եթէ խօսիցիմ՝ իսկ եթէ գտցին անդ ե-
րեսուն: Եւ ասէ. ոչ կորուսից՝ եթէ գտցի անդ
երեսուն: Եւ ասէ, որովհետև կալայ խօսիլ ընդ
Տէն. եթէ գտցի անդ քսան: Եւ ասէ՝ ոչ կորու-
սից վէ քսանից: Եւ ասէ. միթէ բարկ ինչ Տէր,
եթէ խօսիցայց ևս միւսանգամ. եթէ գտանի-
ցի անդ տասն: Եւ ասէ. ոչ կորուսից վէ տա-
սանցն: Եւ գնաց Տէր՝ իբրև լռեաց ՚ի խօսելոյ
առաի ընդ Աբրահամու. և Աբրահամ դարձաւ
՚ի տեղի իւր: Եւ եկին երկու հրեշտակքն ՚ի
Սոդոմ ընդ երեկս. և Ղովտ նստեր առ դրան
սոդովմացւոցն. իբրև ետես Ղովտ՝ յարեաւ ընդ ա-
ռաջ նոցա, և երկիր եպագ ՚ի վէր երեսաց իւրոց յեր-
կիր՝ և ասէ. Ներհաւասիկ ես տեառնք, եկայք ՚ի տուն

ծնչի ձերոյ՝ հանգիրուք. և լուացիք զոտս ձեր. և կանխեալ ընդ առաւօտս երթիջիք զճանապարհ ձեր։ Եւ ասեն ոչ, այլ ի քաղաքամիջի առա ապցուք։ Եւ բռնադատեաց զնոսա յոյժ. և խոտորեցան առ նա. և մտին ի տուն նի. և ածաւ նց ընթրիս. և բաղարջ եփեաց նց՝ և կերին։ Ի ինչէն ի քուն մտեալ էր նց. և ոչք քաղաքին սոդովմացւոց պատեցին զտունն յերիտասարդաց մինչև ցծերս. ամ ժողովուրդն ի միասին։ Եւ կոչէին արտաքս զԼովմ. և ասէին ցնա. ուր են ոչք որք մտին առ քեզ գիշերի. ած զնոսա առ մեզ, զի գիտասցուք զնոս։ Եւ ել առ նոսա Լովմ արտաքոյ դրանն. և զդուռն ձգեաց զկնի իւր։ Եւ ասէ ցնոս. քաւ լիցի ձեզ եղբարք. մի գործեք զայդ չարիս։ Ահա իմ երկու դստերք, որք զայր ոչ գիտեն։ Հանից զնոսա առ ձեզ. և արարէք ընդ նոսա, ոյզ և հաճոյ իցէ ձեզ. քայց միայն այրանդ այդոցիկ մի ինչ մեղս առնիցէք. որովհետև մտին ընդ յարկաւ գերբանաց իմոց։ Եւ ասեն. ի քայ կաց. մտեր բնակիլ պանդխատեցեր. միթէ և դատաստանեալ գաս առնել. այժմ և զքեզ ևս չարչարեսցուք առաւել քան զնոսն։ Եւ բռնադատէին զայրն զԼովմ յոյժ. և մերձ էին զդռան խորտակել։ Եւ ձգեալ արանցն զձեռս իւրեանց կորզեցին զնի և զԼովմ ի տուն անդր. և զդուռն տանն փակեցին։ Եւ զարն որք առ դուրս տանն կային հարին կուրութիւք, ի փոքունէ մինչև ցմեծն. և լքան խնդրել զդուռն։ Եւ ասեն ածն ցԼովմ. է ոք քո աստ փեսայ կամ որդիք կամ դստերք, կամ այլ ոք՝ որ քո իցէ ի քաղաքի աստ.

հան զնա ՚ի տեղւոջէ յայսմանէ : Օհ կործա-
նելոց եմք մեք զքաղաքս զայս . զի բարձրացաւ
աղաղակ սո՛ւց առաջի Տ՚ն . և առաքեաց զմեզ Տ՚ր
սատակել զնա : Եւ Պողոս , և խօսեցաւ ընդ փի-
սայս իւր . որք առնէոց էին զգաստս նո՛ր . և
ասէ , արի՛՛ք՝ և երթ՚ք ՚ի տեղւոջէ ասոի յայսմա-
նէ . զի սատակէ Տ՚ր զքաղաքս : Եւ ՚ի ծովէր ծայր
առնել յաչս փեսայից իւրոց : Եւ իրրև եղև
առաւօտ , փութացուցանէին հրեշտակքն զՊողո՛՛
և ասէին . արի՛՛ ա՛ռ զկին քո և զերկուս դստերս
քո , զոր ունիս . և ել աստ՚ զի մի՛՛ և դու կորն-
չիցիս ընդ անօրէնութիա քաղաքիդ : Եւ նո՛՛
խոովեցան . և կալան հրեշտակքն զձեռանէ նո՛՛
և զձեռանէ կնոջ նո՛՛ . և զձեռանէ երկուց դս-
տերաց նո՛՛ . զի խնայեաց Տ՚ր ՚ի նա . և հանին
զնա . և եդին արտաքոյ քաղաքին : Եւ եղև
իրրև հանին զնա արտաքս , ասեն՝ ապրեցո՛ զանձն
քո . մի դառնայցես յետս , և մի կայցես յամ
կողմանս աշխարհիդ . զերծի՛՛ ՚ի լեառն . գո՛ցէ
ևս ըմբռնիցիս : Եւ ասէ Պողո՛՛ ցնա . ապաչեմ
տեառը իմ : Արդ՚ հետև եգիտ ծո՛՛ զո ողորմու-
թիւն առաջի քո . և մեծ արարեր զարդարութի՛՛
քո . զոր առնես յիս ապրիլ անձին իմոյ . և արդ
ես ոչ կարեմ զերծանիլ ՚ի լեառն . գուցէ հա-
սանիցեն ինձ չարիք՝ և մեռանիցիմ : Ա՛՛ հա քա-
ղաքս այս մերձ է անկանիլ ՚ի նա , որ է փոքրիկ .
անդ ապրեցայց . և չէ փոքր . և կեցցէ անձն
իմ վա՛՛ քո : Եւ ասէ ցնա՝ ահաւադիկ արարի մե-
ծապանս երեսաց քոց . և ՚ի բանի յայդմիկ չկոր-
ծանել զքաղաքն , վա՛՛ որոյ խօսեցար : Եւ արդ
փութա՛՛ զերծանիլ ՚ի նա , զի ոչ կարեմ առնել
իրս

իրս ինչ՝ մինչև անկանիցին անդր. ևս այնորիկ
կոչեաց զանուն քաղաքին այնորիկ Սեգոր։ Ընթ-
գաւն ծագեաց յերկիր. և Ադամ եմեա՛ի Սեգոր։
Եւ Տէր տեղաց՝ի Սոդոմ և՝ի Գոմոր ծծումբ և
հուր՝ի Տնէ յերկնից։ Եւ կործանեաց զքաղաքան
զայնոսիկ. և զամ կողմանս և զամ բնակիչս քա-
ղաքացն և զամ բոյս երկրին։ Եւ դարձաւ կինն
Ադամայ յետս. և եղև արձան աղի։ Եւ կանխեաւ
Աբրահամ ընդ առաւօտն՝ի տեղին ուր կայր առաջի
Տն։ Եւ հայեցաւ յերեսս սոդովմացւոց և գոմո-
րացւոց. և յամ երեսս երկրի գաւառին. և ե-
տես՝ և ահա ելանէր բոց երկրին իբրև մխրիկ
հնոցի։ Եւ եղև՝ի սատակել Տն զամ զքաղաքս
շուրջ զբնակութիւն. յիշեաց Ած զԱբրահամ.
և ետան արձակեաց զԼոտ՝ի միջոց կործան-
մանն. ՛ի կործանել Տն զքաղաքն յորս բնա-
կեալ էր՝ի նոս Լոտ։ Եւ ել Լոտ՝ի Սեգովայ.
և նստէր՝ի լերինն. և երկոքին դստերք նր ընդ
նմա. քանզի երկեաւ բնակիլ՝ի Սեգոր. և բնա-
կեաց յայրի անդ ինքն և երկոքեան դստերք նր
ընդ նմա։ ծն. 30։

## Ընթերցուածս Հաւատոց։

### ա. 10։

Որդեակ՝ մի խաբեսցեն զքեզ ամք ամպա-
րիշտք. և մի ախորժեսցիս։ Եթէ կոչեսցեն
զքեզ՝ և ասասցեն. Եկ ընդ մեզ՝ կցորդ լեր ա-
րեան. ծածկեսցուք յերկրի գայր արդար՝ի տա-
րապարտուց։ Կլցուք գնա կենդանւոյն իբրև
դժոխք. և բարձցուք գյիշատակս նր յերկրէ։
Եւ գտացուք ածս նր գպէսպէս ըմբռնեսցուք.

լցուք զաւուն մեր աւարաւ : Ո՛վ վիճակ քո սիրէ
քնդ մեզ . զքսակ հասարակաց առաջուք ամենե-
քեան . զանձարան ի միասին հոգեցի մեր : Որ-
դեակ մի երթայր ճանապարհ ընդ նե . խոտորեաւ
գոան քո ի շաւղաց նոցա : Օ՛ն ոտք նոյ ի չարիս
ընթանան . և երագուն են ի հեղուլ զարիւնս :
Օ՛ն ոչ եթէ ապարդարուց ձգին գործիք
թռչնոց : Վասնզի նոքին իսկ որք սպանանեն
հաղարդին , գանձեն անձանց իւրեանց չարիս :
(Արծանուամբ անօրինաց չար է :) Այս ճանա-
պարհք են ամենեցուն՝ որք գործեն զանօրէնս .
զի անդարշտուիցէ զանձինս իւրեանց սատակեն :

19 :

Ընթերցուածս ի Յաբարեայ մարգարէէ :
Ժ. ԱՄ . 11 :

Եւ ծանիցեն քահանայիքն զկաշինս պահես-
տի իմոյ . զի բան Տեառն է : Եւ ասացի ցնոս , Եթէ
բարւոք թուի յաչս ձեր . տուք զվարձս իմ . ա-
պա թէ ոչ՝ զդիջոյց արարէք : Եւ կշռեցին զվարձս
իմ երեսուն արծաթի : Եւ ասէ ցիս Տէր՝ արկ
զու զայդ ի բովս . և քննեա թէ փորձ իցէ՝ ոյզ
ես փաստ փորձ ես նոցա : Եւ առի զերեսուն ար-
ծաթին . և արկի ի տուն Տեառն ի բովս : Եւ ընկե-
ցի զդաւազանն երկրորդ զվիճակին , ցրել զուխտ
իմ ի մէջ Յուդայ և ի մէջ Իսրայելի :

14 :

Ըպա Ուղիղ եղևնին։
Ռ֊բել. Ըղաչևցուք. Կ գոնչ։

Ջոմբոյի գէշ։

“Այսր սքանչելիք այսօր տեսանեմք յաշխարհի ի մէջ հողեղինաց. սրտագնաց սրարչին սպանուիլ խորհին վկորհուրդ։ Փոխ Ջօր։ Ուր քահնիէն իւրով զերկինս և զերկիրս հաստատեաց յօնչէչ գոյացուցեալ. վաճառի այսօր դիւրագին ընդ երեսուն արծաթոյ։ Ըչքմ֊ն֊ Ռիչ։ Ուվ Տուդաս արտասուելի երկնաւոր վարդապետին սպանուանե խորհի վկորհուրդ. մատնելով անօրինաց՝ զի խաչեսցի ի մէջ երկրի։

Ռ֊բել. Ա֊ն խաղաղ թեան։ Ըղե֊։ Ջայր գթած։

Ըպա ադոպտիւ Սոհնա ոդեւոյն. Ե։

Ես ասացի Տի ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ։ Ի֊ն֊։

Երանի որ խորհի զաղքատն և զանանկն. յաւուր չարի փրկէ զինա Տէր։ Փ֊կ֊։

Տի փրկէ զինա և կեցուցանէ. երանելի առնէ ի վերս երկրի, և ոչ մատնէ զինա ի ձեռս թշնամեաց իւրոց։

Տի օգնական է նմա ի մահիճս ցաւոց իւրոց. զամ անկողինս նորա դարձուցանէ ի հիւանդութիւն նր։

Ես ասացի Տի ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ. ես մեղայ քեզ։

Աշնամիք իմ ասացին ինձ չար. երբ իցէ զի մեռցի և կորիցէ անուն նր։ Ասա֊

# ԵՒԵԳ
# ՀՈՆԳՐԷԳՈՒԹԻՒՆ

Ի գիշերին Օրհնութիւն գՅ։



ԱՄԲԱՒՕՂՆ ԵՐԿՆԻՑ
Հանգչեցաւոր Հօր Արդեն ներ-
գործեալ իմովք ի վեր քան
զՀրաշս. ձայի առեալ զկերպ
անկողոպտելի ածուածոյն: Լանջին զմարգա-
ցիլոցն ջրով զուսս լուանայր. զի զիմաստհոտիլ ի
նոսա տպաւորեսցէ, Խորհրդութեանն գոլ օթևան:
Լաշ եհէ զմարգին իւր և զարիւն նոր ուխտ ան-
ուանեալ, և միշտակ կամաւոր մահուանն, մեր-
ձեցելոցս ի նա սրբութիւն:

Ղբիւր լուսոյ և ճառագայթի անշիջանելի լոյս.
որ լուանալ յանձն առեր զուսս աշակերտացն.
մաքրեա ի միջոջ վհից խաւարին խորհրդոյ և
լուսաւորեա զմեզ: Որ մերձեալ և արեամբ քո
ցու-

ցաւցեր զԱրդուածին մեղաց . որ միշտ պատուա-
պիս ի մեզ անդադարակս . մաքրեա՛ ի՛ քէն : Որ
քաւիչ կայս նոր ուխտ ցաւցեր կիտ առաջնոյ
քո մնհացելոցս ի՛ ճաշակմանէ նախահօրն .

մաքրեա՛ ի՛ :

Որ հաղ ի՛ յերկինս և ի՛ վը երկրի , այսօր յանձն
առեր լուծանել զուտս աշակերտացն . և զհս լուծ
Քրիստոս ի՛ մեզայ իմոց : Որ բարեբանիս յի-
մանալի զուծարմնոցն , հաճեցաւ մարմնով պա-
տարագիլ . արա և զհս արժանի ընծայիս ընդ-
հիւ : Որոյ աստուա քերովբէ՛ ի վերնատունն բազ-
մեցար . կենարար բաժակաւդ զմեզ փրկեցեր .

փրկեա՛ և զհս յաւիտենից ի՛ հրոյն :

Քրիստոս Ընծ որ վասն մեր խոնարհեցար ի կա-
մաւոր չարչարանս . լուացեր զուտս աշակերտացն
այսօր ի սէր վերնատունն . աղաչեմք փրկիչ
ողորմած : Որ կազմեցեր սեղան խորհրդոյ , և
արբուցեր յանմահական բաժակէն սրբոց քոց
առաքելոցն այսօր ի սուրբ վերնատունն . աղա-
չեմք փրկիչ ո : Անքրեա զվնաս և զխորհուրդս ,
զի և ձեք հաղորդիցուք սրբութիւք ընդ սրբոց քոց
առաքելոցն այսօր ի՛ :

Որ վասն մեր յերկրի երևեալ զամենայնն կա-
տարեցեր ընդ օրինացն . այսօր կատարումն ստուե-
րական ուսիցն՝ Որդի Ընդ ողորմեա : Անդր ճշմա-
րիտ և գառն անարատ՝ որ դատապարտեցեր
զմեզ ի մարմնի . այսօր խոնարհեցար ի լուծանալ
ոտս աշակերտաց . Որդի : ԵՒան Հօր և քահա-
նայապետ ճշմարիտ՝ որ զաշխարհակեցոյց զմար-
մին և զարիւնդ քո բաշխեցեր յառաքեալսն .
այսօր հաղորդին հոգեղէնքս ընծային խորհրդոյդ .

Որդի Ընդ ողոր : Տէր

✠ Յորմէ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին նայիլ, այսօր ի ծառայի կերպարանս եղեալ նախաձայիւ բանն. օրհնեցէք գնա հոգւաւք երգով: Որ զառաքեալսն այսօր ճշմարտապէս կատարեաց՝ լուսանալով զտս աշակերտացն ի պատրանաց թշնամւոյն. օրհնե:

Հէ Որ հառագդ ես Հօր և Որդւոյ անճառաբար բղխումն ի միշտ էէն՝ այսօր բղխեցեր զուարդ կենդանի Հրուսաղէմ. Հոգի Ա՛յ ողջմեա: Որ արարչակից ես Հօր և Որդւոյ՝ որով կենդանաձնեալք ի զուարց արարածք. այսօր որդիս Ա՛յ ծնանիս ի զուարց. Հոգի: Որ փառակից ես Հօր և Որդւոյ և քննես զխորս Աստուծոյ. այսօր խորագետս իմաստից՝ զհիմարս աշխարհի արարբեր. Հոգի ողջո:

Հա Որ երկայնամիտ ես Տէր, քաղցր և անհատակալ. հանգո զՀոգիս քոց ծառայից. զի ի դարձի անանկ ամաչեցեալ յաւուր ահեղ առնին: Օ յիշատակ հրաժարելոցն ի հաճոյս քեզ ընկալցիս. և զտխտս մեր ընկալ ուշ զՔրիստն և զՍուին՝ և զԲրահամն. զի: Ի խորան քում սերոզաց հանգուսցես զծառայս քո. և զհոգիս նոցա գասեսցես ընդ սբս քո. զի մի:

Ո Որ յԵւթեդ ես ընդ Հօր և սբ Հոգւոյն անսկիզբն Որդի. խոնարհեցար ի հայրական ծոցոյ՝ մարդ եղեալ մարմնացար ի կուսէն՝ բառնալով զյաղթութեամբ մահու յանցանաց նախահօրն. քեզ երգիմք ընդ զօրս հրեշտակացն ի մէջ հովճացն՝ օրհնեալ ես Ա՛ն նախայաւիտեան բանդ: Այսօր ծնար որ ի Հօրէ՝ յաւագ քան զյաւիտեանսն Որդի. ճառագայթ փառաց և ծագումն

ան-

անմեղնելի լուսոյն. աստղապուշակ տեսլեամբն յայրին իջեալան և ի մնուր անբանից քաղմեալ. քեզ երգ։ Ծագաւոր փառաց Քրիստոս և արարիչ բոլորից. Ընծ հզոր իշխան հայր հանդերձեալ լուսոյն. մանուկ երևեալ այսօր անփոփոխելիդ ի յԵսւթէ. քեզ եր։

Ա.յսօր ուրախացեալ ցնծան երկինք քաղմութիւնքն ի նաւակատիս նոր եկեղեցւոյ. քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետ յաւիտենից ի լուսաւորել զկամարդիկն նոր զեկեղցի. փառք գալստեան քո Տր։ Ա.յսօր սիւն լուսոյ հովանի եղև մեզ ի բարձանց. քզի Թագաւորն երկնաւոր եկաւորի ի նոր եկեղցի. և զօրք հրեշտակաց ծառայեալ տանեն ընդ մարդկան. փառք։ Փոխ։ Օր։ Ա.յսօր քահանայապետ ճշմարիտ ձեռամբ օրինօքն պատուհեալ՝ կանգնէ զբառանկիւն սեղան խաչին. արժանապէս պատարագեալ բաշխէ զմարմին և զարիւնն Տեառն. մաքրագործ մեռանեցաւ զոր ի վերոյ նոր ժողովուրդ. և հայցեցէք ի Քրիստոս զի շնորհեսցէ զաս մեզ ընդ երկայն աւուրս։

Ա.յժմ և յՏլ։

Ա.յսօր վերստին նորոգեցաք ի յանիծից նահապետէն. ճաշակելով զմարմնին և զարիւն Որդւոյն Աւր. օրհնեցէք զնա հոգևոր երգով։

Սաղմ. փառք հրաշափառ տէրութեանդ Քրիստոս Աստղ ուղղելոյ։ Ածխ. Տր երկնի և երկրի։

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։ Ճանապարհս սրբութեան զձեռս իմ. և շուրջ եղեց զսեղանով քո Տէր։

Տր

Տէր սիրեցի զմայելուքի տան քո, և զտեղի յարկի փառաց քոց։

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան ամենայնիվ դիմի նեղչաց իմոց։

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո ոյր անապակ արբեցոյց զիս։

Փառք և այժմ և ալել։

Ողբ. Ցերգս օրհնութեան։

## Յաւուր օրհնութեան Ժողովոյ Եւ։

Ղազար ի հայրական ծոցոյ ծադեալ հայածեալ գնաւար մեզաց, կենարարդ յայտնեցեր այսօր զհարուրդ ընտրեալ քո աշակերտացն. օրհնեալ եկեալդ ի փրկութիւնն մեզ Աստուած հարցն մերոց։ Որ օրհնեն զառ լուսեղէնք՝ զոտս տաժանեալս լուացեր, զանիծիցն ճրկացեալ ի մէնջ ծածկոյթ, զեսա ծառայի սփացար. օրհնեալ եկ։ Անապականութիւն աղբիւր կենդանարարդ բաշխեցեր զմարմինդ քո, նորոգելով զմահացեալսն յանցանօք ի պատրանաց թշնամոյն. օրհնեալ։ Օրհնեցեք ամ գործք Տեր զՏէր օրհնեցէք. Ա՛ստուածային փառաց էօր և պատկեր թագաւորութեան. որ զեսացաւն այսօր զեսա ծառայական կերպի. քնա ամ ազգիք օրհնեցէք հոգևոր երգով։ Փառք էօր։ Որ անձառ խոնարհութի ի մարդուածն ոտից աշակերտացն զմարդկային ազգի գնացս ուղղեցաց

ի

'ի յերկինս, զնա ասմ։ Ոչխ։ Ոչ։ Որ քաշմամբ կենդանարար խորհրդոյ անապական ճաշակմամբն հրաւիրեաց զմեզ յերկնից արքայութիւնն, զնա ասմ։

## Ուեցասնաչէ էյ։

Ո՞րպէս ասայր յառաջ քան զյարիտեանն բարերարեն զասք անմարմնոց հրեշտակաց, ձայնիւ երգով գոչեն և աղաղակեն՝ Ընծ ասուածոց և Տէր տերանց փրկիչ գոլով։ Փառք ընծ։ Ընտրեցեր զքո միածինդ մարմնանալ 'ի այր կուսէն, և անարատ ծնանիլ յորովայնէ ադամական. բառնալով զմեր նեղութիւն. Ընծ։ Ոչխ։ Ո՞նորհք բարի յիշեմ երևեցաւ հեթանոսաց. զի արարիչն յաւիտենից տգայ եղեալ յորդեղբութիւն կենաց կոչէ. Ընծ ասս։

## Ութսնաւ գէյ։

Զարկօղ զլոյս որպէս զթիոց՝ այսօր անձառ խոնարհութիւն 'ի վերնատունն խորհրդոյ զգեաց ծառայի սպածանիլ յանձն առեր. օրհնեմք զեկեալդ 'ի կամաւոր չարչարանս։ Փառք ընծ։ Որում երկրպագեն զասք հրեշտակաց՝ խոնարհեցար 'ի լուանալ զոտս հօղեզինս. բժշկիչ առաջք զգաշշապարս նախահօրն. բժշկեա զհոգւոյ իմոյ զհիւանդութիւնն։ Ոչխ։ Ոչ։ Որ 'ի խորհուրդս փրկականս եկեղեցւոյ բաշխեցեր աշակերտացն զմարմինդ քո՝ նարոգելով զմահացեալսն 'ի ճաշակմանէ. հաղորդս այսմ ընկալ զմեզ միայն մեղսասէր։

## Տէր յերկինս եւ յ։

Որ անսկիզբն յԱրեւելից ես Աստ՝ այսօր զգենցար զգեստ հողեղէն ծառայի ծածկելով զմերկութիւն նախահօրն. օրհնեալ եկեալդ ի փրկութիւն ազգի մարդկան։ Փառս Քո։ Որ վերօրհնես ի հրեշտակէն քերովբէից՝ այսօր եկեր կամաւ ի վերնատունն խորհրդոյ, լուացեր զաշակերտացն յօրինակ վասն մեր. օրհնեալ եկ։ Ելոյծ ։ Որ յաթոռս փառաց նստիս ընդ Հօր՝ այսօր բազմիլ ընդ աշակերտացն յանձն առեր. բաշխելով զմարմին և զարիւն քո սքի. օրհնեալ։

## Ահաւոր երկե։

Որսացան զանձն արդարոյ, և զարիւն ամբիծ պարտաւոր առնէին։

Նովաւ Տէր ապաւէն իմ. Աստ օգնական յուսոյ իմոյ։

Պատուական փառաւորեսցուք զ Քեզնէ։

Անհնարին ։ Հրաշալի ի հողեղէն կազմուածս ի մարդկանէ յայսօր կարգեցաւ օրինակ խոնարհութեան ի յաշակերտին վարդապետ մերոյ։ Ելոյծ Տէրն մեր լուանայր զոտս աշակերտացն. և պատուիրէր զայս ասելով։ Ահա՛ ի ձէնջ եղերաբեմ մատնեցոց է զիս ի մահ՝ և որոշի յաշակերտացդ։ Փառս Քո։ Օգայն լուեալ Պետրոսի անխարէն առ Յովհաննէս հարցանել թէ ո՞վ էցէ։ Ելոյծ ։ Ասէն զոր ասաց Յն՝ տրտմեցոյց զիւր զաշակերտան և խռովեցան ամենեքեան։

Ելոյ

Ընդ ա՟րեւ. Ա՟ն խաղաղութեա՟ն։ Ընդ Ա՟ր՟ես Տ՟ր։

Սաղմո՟ս ղ՟։ ոչ՟ձայն ասա՟։

Որսացան զանձն արդարոյ, և զարիւն ամբիծ պարտաւոր առնէին։ կ՟։

Ո՟՟՟ձ վրէժխնդիր. Տ՟ր Ա՟ձ վրէժխնդիր յայտնեցար։ կե՟։

Բարձր լեր որ դատիս զերկիր. հատո՟ զհատուցումն ամբարտաւանից։

Մինչև յո՟րբ մեղաւորք Տ՟ր, մինչև յո՟րբ մեղաւորք պարծեսցին։

Խարբատեալ խօսեին զանիրաւութի՟ւն. խօսեսցին ամենեքեան որ գործեն զանօրէնութի՟ւն։

Ժողովուրդս քո Տ՟ր խոնարհ արարին. և ժառանգութի՟ւն քո չարչարեցին։

Այրին, և զպանդխտեան սպանին. զորբն կոտորեցին, և ասացին ոչ տեսանէ զայն Տ՟ր, և ոչ ի միտ առնու Ա՟ձ Յակովբայ։

Յովսէփ քեզ հաւատացեալ Պիղատոսի աղերսեր շնորհել զտէրունեանդ մարմին: փաս ՟օր ե: Օանապական զձածացեալ մարմինդ պատեալ ըբ կտաւովք՝ և եդ ի գերեզմանի: Ելեալ ե ՟ի ՟ղպ: Որ արարիչդ ես այսարածոյ հանգուցեալդ ՟ի քերովբէս՝ վիմով կնքեցար յերկրի:

Պաղոս. Ա՛ խաղաղութիւն: Ողջ. Այո ես Տի:

Ե՛ ապա ասէն ապողպէ ասվ. յէ. ողջույն քաղպանի ՟ի վր առվտրականիս ձեռքեն ղնդնի՛ վնաս

Ադին զնս ՟ի գրի ներքնումն, ՟ի խաւարի և ՟ի ստուերս մահու:

Տէր Ընկ փրկութիւն իմոյ. ՟ի տուէ կարդացի, և գիշերի առաջի քո:

Մտցեն աղօթիք իմ առաջի քո Տէր. խոնարհեսցի ունկն քո ՟ի խնդրուածս իմ:

Օի լցաւ չարչարանօք անձն իմ. և կեանք իմ ՟ի դժոխս մերձեցան, և համարեցայ ես ընդ այնոսիկ որ իջանեն ՟ի գուբ:

Ազէ ես որպէս մարդ առանց օգնականի՝ և ՟ի մեռեալս ազատ:

Որպէս վիրաւորս որ ննջեն ՟ի գերեզմանս:

Օրս դու ոչ յիշեցեր, նորա ՟ի ձեռանէ քումմէ մերժեցան:

Ե՛

Իդին զնս ՚ի գբի նեղբնուածն, ՚ի խաւարի և ՚ի
սաստիկս մահու։
Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո, զամ
զբօսանս քո ածեր ՚ի վրայ իմ։
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ և եդիր զիս
նշաւակ իւրեանց։
Անտնեցայ և ոչ ելանէի. աչք իմ տկարացան
յաղքատութենէ։
Ընդաղեցի առ Տէր զօրհնաւոպաղ. և համ-
բարձի առ քեզ զձեռս իմ։
Միթէ մեռելոց առնիցես զսքանչելիս. կամ բժ-
իշկք յարուցանիցեն, խոստովան առնիցեն
առ քեզ։
Միթէ պատմեսցի՞ ոք երբէք ՚ի գերեզմանի
զողորմութիւն քո. կամ զճշմարտութիւն քո ՚ի
կորստեան.
Միթէ ճանաչեսցին ՚ի խաւարի սքանչելիք քո,
կամ արդարութիւն քո յերկիր մոռացեալ։
Ես առ քեզ Տէր աղաղակեցի, առաւօտու ա-
ղօթք իմ ժամանեսցեն առ քեզ։
Ընդէ՞ր Տէր մերժես զանձն իմ կամ դարձու-
ցանես զերեսս քո յինէն։
Տնանկ և վաստակաւոր եմ ես ՚ի մանկութէ
իմմէ. ՚ի բարձրութէ խոնարհեցայ և ապշեցայ։
Յիս հաստատեցաւ բարկութիւն քո, արհաւիրք
քո խռովեցուցին զիս։
Հ ընկեցան զինէ որպէս ջուր. զօր ամ պաշա-
րեցին զիս ՚ի միասին։
Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ, և զծա-
նօթս իմ վասն թշուառութեան իմոյ։

ՕՐՆԻ ՈՐԹԻՒ։

Սաղմոս Ա։ Երանելի որ ըստ Նաթիէոսի։
Ղ. 62։

Ալ թաղման Տէր մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ա՛ւ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս, և ասեն. տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր. թէ յետ երից աւուրց յառնեմ։ Ուրդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն, թէ յարեաւ ի մեռելոց. և լինիցի յետին մոլորումն չար քան զառաջինն։ Ասէ ցնոսա Պիղատոս. ունիք զզօրականն, երթայք զգուշացարուք ոպ և գիտէք։ Ա՛ւ նո՛ք երթեալ զգուշացան գերեզմանին, և կնքեցին զվէմն հանդերձ զօրականաքն։ 66։

Երգ. Տէրն յետ սատկմանն։

Հաւաք. Խնդրեսցուք։ Ակեցո՛ ընդ։ Ընդ. Քրիստոս մեռաւ ամենազօր և հրաշալի թաղմանդ։

(Լռեն կամի՝ պահ ի ոտն կոխման։)

Ա՛ռ զնէն զքէ խաչն յոպեան, պոպեալ սպիտակ պատառոտակալա։ Ա՛ռ եպիրոգելն ի համբուրելոն զքէ խաչն ի պատարագին։ Ա՛ռ ասելն Հայրական բն։

Ա՛ստէ զո՛ Քրիստոս երկիրպագանեմք, և զքաղցումն զո՛ մեծացուցանեմք, և սբ զյարուածիդ զո՛ պա-

փառաւորեմք. եկայք հաւատացեալք՝ երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. զմանկն եկն ի ձեռն խաչին իւրոյ ընդհեաց պարգեւս աշխարհի։

Փառք ըբ խաչիդ՝ ալէլուիա. ըբ Միութիւդ՝ ալէլուիա. ըբ յարութիդ՝ ալէլուիա։ Նշանեցաւ առ մեզ լոյս յերեսաց քոց և ետուր ուրախութիւն սրտից մերոց։ Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնս։ Փառք ըբ խաչիդ ալէլուիա։ Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։ Փառք սքբ խաչիդ ալէլուիա։

Ա

Ասէն կենարար՝ որ եղև մեզ փրկութիւն. սուաւ ամենեքեան զքեզ բարեբանեմք։ Որ ի Հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկիր, և զաւազան զօրութիւն հաւատացելոց. սուաւ։ Որ լուսաւոր ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ՝ ի յօդնութիւն ընդդէմ թշնամւոյն. ասաւ։

Բ

Վարդ. Սքբ խաչիդ։ Ընկեր. Պահպանեա։

Յերեմիայ ճրագալոյծ սքբ վարդին՝ յինն ժամ ժողովին ի սքբ տաղտանն, ի լսողանն երես կանխելոյ։ Ա– ասէն վճռաշունչ ժամ. ի նշոյթ գործէ։ Ոսկի խտնարհեցո, ի Ադրեցո ոչ գոյ։

Ընչ վինի ճշմարիտ անուանի կոչեան, կամ ասպետութիւն յոչնոչութեան պատճառ եղոյր յոյնից։

Սաղմոս ճԺ։

Եղիցի անուն Տ՚ն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան։

Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանուն Տ՚ն։

Եղիցի անուն Տ՚ն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան։

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու օրհնեալ է անուն Տ՚ն։

Բարձր է ՚ի վը՚ս ամ՚ս ազգաց Տ՚ը. և յերկինս են փառք նորա։

Ո՞վ է ոմն Տ՚ը Ը՚ծ մեր ՚ի բարձունս բնակեալ. և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի։

Յարուցանէ զաղքատս յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց։

Եւ տուցանէ զնս իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զամուլն ՚ի տան ուրախամիտ՝ ոմն մայր որդւովք բերկրեալ։

Յաղթ Շաբաթի Գ։

Այսօր ածուխին զմարճանայ Նոր Հաստատեալով վերկիր. պարք սըք փառաբանեն զմարթնոց. և մք ձայնիւ օրհնութիւ զարդարեսցուք զսը զտօնս։ Այսօր և մեք ընծամբ ածխիս ընդհանուր հնչմամբ. մեծապէս փայլմամբ երևեցաւ յաշխարհի. առ Ը՚ծ գոհութիւք ընթանան. պատմեն անդադար զբան կենդանի։ Խնդա և զմարճացիր եկեղեցի. կոյս նը և Տարսն երկնաւոր փեսային. ահա տեսանեմք զօծիչն զՔ՚ս. գոլով առ քեզ լոյսն հեթանոսաց։ Ալե-

~~Եղեսիա. ալելուիա.~~

Լու ևս խաղաղութիւն։ Օրհնութիւն և փառք։

Սաղմոս ճձ։ ՚ի Ի-ո—

Ա յսօր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ՚ի նմ։

Աստուածն եղերութ Տէր, և բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ընտրեաց տունն Իսրայէլ զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ընտրեաց տունն Ահարոնի զի յաւիտեանս ողորմութիւն նորա։

Ընտրեցին երկիւղածք Տէր զի յաւիտեան է ողորմութիւն նորա։

Ի նեղութենէ կոչեցի զՏէր, և լուաւ ինձ ի լայնութեան։

Տէր է իմ օգնական. և ես ոչ երկեայց. զի՞ առնիցէ ինձ մարդ։

Տէր է իմ օգնական. և ես տեսից ՚ի թշնամիս իմ։

Բարի է յուսալ ՚ի Տէր, քան յուսալ ՚ի մարդիկ։

բարի է յուսալ ՚ի Տէր, քան յուսալ ՚ի իշխանս։

Ամենայն ազինք շրջեցան զինեա, և անուամբ Տեառն յաղթեցի նոցա։

Շրջելով շրջեցան զինեա. պաշարեցին զիս ՚ի մէջ, և անուամբ Տեառն վանեցի զնոսա։

Շուրջ եղեն զինեա ոչ մեղուք. վառեցան, բորբոքեցան ոչ փուշք ՚ի հուր. և անուամբ Տեառն մերժեցի զնոսա։

Ի մերժելն դրդուեցայ, և եղէ մերձ ՚ի գլորել. և Տէր ընկալաւ զիս։

Օ-

Ծ օրութիւն իմ և օրհնութիւն իմ Տ՛ր. և եղիցի ինձ
փրկութիւն:
Զայն ցնծութեամբ փրկութենէն ՚ի յարկս ար-
դարոց:
Աչ Տ՛ն արար զօրութիւն. աչ Տ՛ն բարձր արար զիս.
և աչ Տ՛ն արար զօրութիւն:
Ոչ մեռայց, այլ կեցից՝ և պատմեցից զգործս
Տեառն:
Խրատեալով խրատեաց զիս Տ՛ր. և ՚ի մահ ոչ
մատնեաց:
Բացէք ինձ դրունս արդարութեանց, զի մտից ընդ
այն՝ և խոստովան եղէց Տ՛ն:
Այս դուռն Տ՛ն է. և արդարք մտանեն ընդ սա:
Խոստովան եղէց քեզ Տ՛ր, զի լուար ինձ. և եղե-
ր ինձ ՚ի փրկութիւն:
Վէմն զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ
անկեան:
՚Ի Տ՛նէ եղև այս. և է սքանչելի յաչս մեր:
Այսօր է զոր արար Տ՛ր. եկայք ցնծասցուք և
ուրախ եղիցուք ՚ի սմա:
Ո՛ Տէր փրկեա, ո՛ Տ՛ր առաջնորդեա. օրհնեալ
որ գալոց ես անուամբ Տ՛ն, և օրհնեցաք ՚ի քէն
՚ի տանէ Տեառն:
Տ՛ր Աստ մեր երևեցաւ մեզ. արարէք տօնս ուրա-
խութիւն կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ:
Աստ իմ ես դու, և խոստովան եղէց քեզ. Աստ
իմ ես դու՝ և բարձր արարից զքեզ:
Խոստովան եղէց քեզ Տէր՝ զի լուար ինձ, և ե-
ղեր ինձ ՚ի փրկութիւն:
Խոստովան եղերուք Տ՛ն, զի բարի է. զի յաւի-
տեան է ողորմութիւն նր:

Ար-

Ոպա ընկեռանոռ. հոգևջառով վերկոպատոռ, քնը֊
ներցուածո։

Ընդերցուած ի Ծննդոց։

Կ. I։

Ի սկզբանէ արար Ը֊ծ զերկին և զերկիր։ Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ. և խաւար ի վր անդնդոց. և Հոգի Ը֊ն շրջէր ի վերոյ ջրոց։ Եւ ասաց Ը֊ծ. եղիցի լոյս. և եղև լոյս։ Եւ ետես Ը֊ծ զլոյսն զի բարի է. և մեկնեաց Ը֊ծ ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին։ Եւ կոչեաց Ը֊ծ՝ զլոյսն տիւ, և զխաւարն կոչեաց գիշեր. և եղև երեկոյ՝ և եղև վաղորդևայն՝ օր մի։ Եւ ասաց Ը֊ծ. եղիցի հաստատուածք ի մէջ ջրոցդ. և եղիցի մեկնիչ ի մէջ ջուրցդ, և ջուրց. և եղև այնպէս։ Եւ արար Ը֊ծ զհաստատուածին, և անջրպետեաց Ը֊ծ ի մէջ ջրոյն, որ էր ի ներքոյ հաստատուածին, և ի մէջ ջրոյն՝ որ ի վերոյ հաստատուածին։ Եւ կոչեաց Ը֊ծ զհաստատուածիւնն երկին։ Եւ ետես Ը֊ծ զի բարի է. և եղև երեկոյ՝ և եղև վաղորդևայն, օր երկրորդ։ Եւ ասաց Ը֊ծ. ժողովեսցին ջուրքդ որք ի ներքոյ երկնից ի ժողով մի. և երևեսցի ցամաքն. և եղև այնպէս. և ժողովեցան ջուրքն, որք ի ներքոյ երկնից ի ժողով իւրեանց. և երևեցաւ ցամաքն։ Եւ կոչեաց Ը֊ծ զցամաքն երկիր, և զժողովս ջուրցն կոչեաց ծով. և ետես Ը֊ծ զի բարի է։ Եւ ասաց Ը֊ծ, բղխեսցէ երկիր զբոյս֊ս֊ջար խոտոյ. սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանութեան, և ծառ պտղաբեր՝ առնել պտուղ ըստ

քսան ազգի իւրում. որոյ սերմն իւր ի նմին ը ազգի ի նմանութի ի վերայ երկրի. և եղև այնպէս: Եւ ե հան երկիր զբանջար խոտոյ սերմանել սերմն ը ազգի և ը նմանութե. որ է ի վր նմ երկրի. և փայտ պտղաբեր՝ առնել պտուղ. որոյ սերմն իւր ի նմին ը ազգի ի վր երկրի. և ետես Ա զի բարի է: Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդեայն, օր երրորդ: Եւ ասաց Ա. եղիցին լուսաւորք ի հաստատութե երկնից ի լուսաւորութե ի վր երկրի. և մեկնել ի մէջ տունջևան և ի մէջ գիշերոյ. և եղիցին ի նշանս, և ի ժամանակս, և յաւուրս, և ի տարիս: Եւ եղեցին ի լուսաւորութե ի հաստատութե երկնից ծագել յերկիր. և եղև այնպէս: Եւ արար Ա զերկուս լուսաւորսն զմեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութե տունջևան և զլուսաւորն փոքր՝ յիշխանութե գիշերոյ, և զաստեղս: Եւ եդ զնս Ա ի հաստատութե երկնից, լուսաւոր լինել յերկիր. և իշխել տունջևան և գիշերոյ. և մեկնել ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին, և ետես Ա զի բարի է: Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդեայն՝ օր չորրորդ: Եւ ասաց Ա. հանցեն ջուրք զեռունս շնչոց կենդանեաց, և թռչունս թևաւորս ի վր երկրի ը հաստատութե երկնի, և եղև այնպէս: Եւ արար Ա կէտս մեծամեծս, և զամ շունչ զեռնոց կենդանեաց զոր հանին ջուրք ը ազգի իւրեանց. և զամ թռչուն թևաւոր ը ազգի: Եւ ետես Ա զի բարի են: Եւ օրհնեաց զնս Ա և ասէ. աճեցէք, և բազմացարո՛ք. և լեցէք զջուրսդ որք ի ծովս. և թռչունքդ բազմասցին ի վր երկրի: Եւ եղև երեկոյ, և եղև վաղորդեայն, օր հինգերորդ: Եւ ասաց Ա. հան-

ցՔ երկիր շունչ կենդանի ըստ ազգի հոգեբոտանի, և
սողունս և գազանս երկրի ըստ ազգի. և եղև այն-
պես։ Եւ արար Ած զգազանս երկրի ըստ ազգի, և
զանասունս ըստ ազգի՝ և զամենայն սողունս երկրի ըստ
ազգի իւրեանց. և տեսեալ Ած՝ զի բարի են։ Եւ ա-
սաց Ած, արասցուք մարդ ըստ պատկերի մերում և
ըստ նմանութեան, և իշխեսցէ ձկանց ծովու. և թռչնոց
երկնից. և անասնոց. և ամենայն երկրի. և ամենայն
որք սողին՝ ի վրայ երկրի։ Եւ արար Ած զմարդն՝ ի
պատկեր իւր. ըստ պատկերի Ածի արար զնա, արու և
էգ արար զնա։ Եւ օրհնեաց զնոսա Ած՝ և ասէ.
աճեցէք՝ և բազմացարո՛ւք՝ և լցէք զերկիր, և
տիրեցէք դմա. և իշխեցէք ձկանց ծովու. և
թռչնոց երկնից. և ամենայն անասնոց, և ամենայն երկրի.
և ամենայն սողնոց՝ որք սողին՝ ի վրայ երկրի։ Եւ ա-
սաց Ած. ահաւադիկ ետու ձեզ զամենայն խոտ սեր-
մանելի սերմանել սերմն, որ է՝ ի վերայ ամենայն
երկրի. և զամենայն փայտ որ ունիցի յինքեան պտուղ
սերման սերմանելոյ, ձեզ լիցի՝ ի կերակուր։ Եւ
ամենայն գազանաց երկրի, և ամենայն թռչնոց երկնից,
և ամենայն սողնոց՝ որք սողին՝ ի վրայ երկրի՝ որ ունիցի
շունչ կենդանի, և ամենայն խոտ դալար՝ ի կերակուր.
և եղև այնպէս։ Եւ ետես Ած զամենայն զոր արար, և
ահա բարի են յոյժ։ Եւ եղև երեկոյ՝ և եղև վա-
ղորդեայն, օր վեցերորդ։ Եւ կատարեցան եր-
կինք և երկիր, և ամենայն զարդ նոցա, և կատարեաց
Ած յաւուրն վեցերորդի զգործս իւր՝ զոր արար։
և հանգեաւ յաւուրն եօթներորդի յամենայն
գործոց իւրոց՝ զոր արար։ Եւ օրհնեաց Ած զօրն
եօթներորդ, և սրբեաց զնա. զի՝ ի նմա հան-
գեաւ յամենայն գործոց իւրոց՝ զոր սկսաւ առնել
Ած։

Ը։ Ա յս է գիր ազատածոց երկնի և երկրի, յաւուր յորում արար Ը զերկինն և զերկիր։ Եւ զամ բանջար վայրի՝ մինչչև լեալ էր ի վր երկրի. և զամ խոտ վայրի՝ մինչչև բուսեալ էր, զի չև ևս էր տեղայեալ Տն Ը՝ի վերայ երկրի. և մարդ չէր՝ որ գործէր զերկիր։ Այլ աղբիւր ելանէր յերկրէ՝ և ոռոգանէր զամենայն երեսս երկրի։ Եւ ստեղծ Տն Ը զմարդն հող յերկրէ. և փչեաց յերեսս նր շունչ կենդանի. և եղև մարդն հոգի կենդանի։ Եւ տնկեաց Ը դրախտն յԱդեմ ընդ արևելս, և եդ անդ զմարդն զոր ստեղծ։ Եւ բուսոյց ևս Տն Ը յերկրէ զամ ծառ գեղեցիկ ի տեսանել՝ և քաղցր ի կերակուր. և զծառն կենաց ի միջ դրախտին, և զծառն գիտելոյ զբիտուածի բարւոյ և չարի։ Եւ գետ ելանէր յԱդեմայ ոռոգանել զդրախտն. և անտի բաժանի ի չորս առաջս։ Ընուն միոյն Փիսոնն. նա է որ պատէ զամ երկիրն Եւիլատայ. անդ ուր ոսկին է։ Եւ ոսկի երկրին այնորիկ աղնիւ. և անդ է ակն սուտակ և դահանակ։ Եւ անուն գետոյն երկրորդի Գեհոնն, նա պատէ զամ երկիրն Եթիոպացւոց։ Եւ գետն երրորդ՝ Տիգրիս. նա է որ երթայ յանդիման Սորեստանի։ Եւ գետն չորրորդ՝ Եւփրատէս։ Եւ էառ Տն Ը զմարդն զոր արար. և եդ զնա ի դրախտին փափկութեանն, գործել զնա և պահել։ Եւ պատուիրեաց Տն Ը Ադամայ՝ և ասէ, յամ ծառոց որք են ի դրախտիդ՝ ուտելով կերիցես։ Այլ ի ծառոյն գիտութեանն բարւոյ և չարի մի ուտիցէք՝ զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ՝ մահու մեռանիցիք։ Եւ ասաց Տն Ը,

ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցուք
դմա օգնական ըստ դմա: Եւ ստեղծ ևս Տէր Ած
զամ գազանս վայրի, և զամ թռչունս երկնից,
և էած զնոսա առ Ադամ, տեսանել զի՞նչ կո-
չեսցէ զնոսա. և ամ ընդ կենդանւոյ, զինչ և
անուանեաց Ադամ այն անուն է նորա: Եւ կո-
չեաց Ադամ անուանս ամ անասնոց, և ամ
թռչնոց երկնից, և ամ գազանաց վայրի. բայց
Ադամայ ոչ գտաւ օգնական նման նմա: Եւ
հարկ Տէր Ած թմրութիւն ի վերայ Ադամայ, և
ննջեաց. և էառ ի կողից նորա, և ելից ընդ այնր
մարմին: Եւ շինեաց Տէր Ած զկողն զոր էառ յԱ-
դամայ ի կին, և էած զնա առ Ադամ: Եւ ա-
սէ Ադամ. այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց. և
մարմին ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի
յառնէ իւրմէ առաւ: Վասն այնորիկ թողցէ այր
զհայր իւր՝ և զմայր իւր. և երթիցէ զկետ կնոջ
իւրոյ: Եւ եղեցին երկուքեան ի մարմին մի. և էին
երկոքեանն մերկ՝ Ադամ և կինն իւր, և ոչ ա-
մաչէին: Եւ օձն էր իմաստնագոյն քան զամե-
նայն գազանս որ ի վերայ երկրի, զոր արար Տէր
Ած. և ասէ օձն կնկին. զի՞ է զի ասաց Ած,
թէ յամենայն ծառոց որք իցեն ի ներքս ի դր-
բախտի այդր՝ մի ուտիցէք: Եւ ասէ կինն ցօձն:
ի պտղոյ ծառոց դրախտիդ կերիցուք: Բայց ի
պտղոյ ծառոյն, որ է ի մէջ դրախտին, ասաց
Ած, մի ուտիցէք ի նմանէ, և մի հռուպ լինիցիք՝
զի մի մեռանիցիք: Եւ ասէ օձն կնկին, ոչ եթէ
մահաբեր մեռանիցիք: Գի գիտէր Ած, թէ յո-
րում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցին աչք
ձեր. և լինիցիք իբրև զԱստուածս. ճանաչել զբարի

և

և զչար: Եւ ետես կինն զի բարի էր ծառն ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ, և գեղեցիկ ի տեսանել. և էառ ի պտղոյ նր և եկեր. և ետ առն իւրում ընդ իւր, և կերին: Եւ բացան աչք երկոցունցն. և գիտացին զի մերկք էին. և կարեցին տերեւս թզենւոյ. և արարին իւրեանց սխածանելիս: Եւ լուան զձայն գնալոյ Տ՚Ն Ա՚Յ ի դրախտի անդ ընդ երեկս. և թաքեան Ադամ և կին իւր յերեսաց Տ՚Ն Ա՚Յ՝ ի մէջ ծառոց դրախտին: Եւ կոչեաց Տ՚ր Ա՚Ծ զԱդամ. և ասէ ցնա. Ո՞ւր ես: Եւ ասէ. լուայ զձայն քո ի դրախտի աստ՝ և երկեայ. քանզի մերկ էի՝ և թաքեայ: Եւ ասէ ցնա. ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես: Եթէ ոչ՝ ի ծառոյն՝ յորմէ պատուիրեցի քեզ անտի առնել չուտել, կերեր ասդեղք ի նմանէ: Եւ ասէ Ադամ. կինս զոր ետուր ընդ իս՝ սա ետ ինձ ի ծառոյ անտի և կերի: Եւ ասէ Տ՚ր Ա՚Ծ ցկինն. զի՞նչ գործեցեր զայդ: Եւ ասէ կինն. օձն խաբեաց զիս, և կերի: Եւ ասէ Տ՚ր Ա՚Ծ ցօձն. փոխանակ զի արարեր դու զայն, անիծեալ լիցիր դու յամ անասնոց՝ և յամ գազանաց երկրի. ի վերայ լանջից և որովայնի քո գնասցես. և հող կերիցես զամենայն աւուրս կենաց քոց: Եւ եպից թշնամութիւն ի մէջ քո և ի մէջ կնոջդ. և ի մէջ զաւակի քո, և ի մէջ զաւակի դորա. նա սպասեսցէ քում գլխոյ, և դու սպասեսցես նորա գարշապարի: Եւ ցկինն ասէ. բազմացուցանելով բազմացուցից զտրտմութիւնս քո և զհեծութիւնս. տրտմութեամբ ծնցիս որդիս. և առ այր քո դարձ քո, և նա տիրեսցէ քեզ: Եւ ցԱդամ ասէ. փոխանակ զի լուար ձայնի կնոջդ քո, և կերեր ի

Ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել, և կերեր ի նմանէ, անիծեալ լիցի երկիր ի գործս քո. տրամուխէ կերիցես զնա զամ աւուրս կենաց քոց։ Փուշ և տատասկ բուսցանէ քեզ. և կերիցես զբանջար վայրի։ Ի քրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո. մինչև դարձցիս յերկիր, ուստի առար. զի հող եիր և ի հող դարձցիս։ Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ կեանս. զի նա է մայր ամ կենդանեաց։ Եւ արար Ած Ադամայ և կնոջ նր հանդերձս մաշկեղէնս, և զգեցոյց զնս։ Եւ ասէ Տր Ած. ահա Ադամ եղև իբրև զմի ի մէնջ՝ գիտել զբարի և զչար. և արդ՝ գուցէ ձգիցէ զձեռն, և առնուցու ի ծառոյն կենաց. ուտիցէ, և կեցցէ յաւիտեան։ Եւ եհան արձակեաց զնա Տր Ած ի դրախտէ անտի փափկութե՝ գործել զերկիր՝ ուստի առաւ։ Եւ եհան զԱդամ, և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութե։ Եւ հրամայեաց քերովբէից, և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց։ Ե. 24։

Ընդ քեզ հանդերձ ծունր դնելով զՏեր աղաչեցուք։ Տէր ողորմեա։ Երեք անգամ կրկնեա։

Եւ ևս խաղաղութե։ Օրհնութի և փառք։

Ընթերցուած ի Յննդոց։
Լե. 1։

Եւ եղև յետ բանիցս այսոցիկ փորձեաց Ած զԱբրահամ՝ և ասէ ցնա. Աբրահամ Աբրահամ. և նա ասէ՝ աւասիկ եմ։ Եւ ասէ ցնա. առ դու՝ զորդիդ քո զսիրելի, զոր սիրեցեր զԻսա-

հակ. և գնա դու յերկիր բարձր. և հանցես զդա անդ յողջակէզ ի վի միոյ լերանց՝ յորոց ասացից քեզ: Եւ յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն, համեստաց զէշ իւր. և էառ ընդ իւր երկուս ծառայս և զԻսահակ զորդի իւր. և պատառեաց փայտ յողջակէզ. յարեաւ և գնաց և եկն ի տեղին զոր ասաց նմա Ած: Եւ յաւուրն երրորդի համբարձ Աբրահամ զաչս իւր. և ետես զտեղին ի հեռաստանէ: Եւ ասէ Աբրահամ ցպատանիս իւր. նստարո՛ւք դուք այդր հանդերձ իշովդ. և ես և պատանեակս երթիցուք մինչև ցանդր, և երկրպագցուք. և դարձցուք առ ձեզ: Եւ էառ Աբրահամ զփայտ ողջակիզին. և եդ ի վի Իսահակայ որդւոյ իւրոյ. և էառ ի ձեռն զհուրն և զսուր. և գնացին երկոքեան ի միասին: Եւ ասէ Իսահակ ցԱբրահամ ցհայր իւր. Հա՛յր: Եւ նա ասէ. ընդ է որդեակ: Եւ նա ասէ՝ ահա հուր՝ և ահա փայտ. ո՞ւր է ոչխար յողջակէզ: Եւ նա ասէ. Ած տեսցէ իւր ոչխար յողջակէզ որդեակ. գնացին երկոքեան ի միասին: Եւ եկին ի տեղին, զոր ասաց նմա Ած, անդ շինեաց սեղան Աբրահամ. և եդ ի վերայ զփայտն. և կապեաց զԻսահակ զորդի իւր. և եդ զնա ի սեղանն ի վի փայտին: Եւ ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն և զնուլ զորդի իւր: Եւ կոչեաց զնա հրեշտակ Ած յերկնից՝ և ասէ. Աբրահա՛մ Աբրահամ: Եւ նա ասէ ցնա. ահաւասիկ եմ: Եւ ասէ. մի՛ մերձ զձեռն քո՛ ի պատանեակդ, և մի՛ ինչ առներ դմա. զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու ԱՒՇ. և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ: Համբարձ Աբրա-

Աբրահամ զաչս իւր և ետես. և ահա խոյ մի կախեալ կայր զձառոյն Սաբեկայ զեղջերաց։ Եւ գնաց Աբրահամ և էառ զխոյն. և եհան զնա յողջակէզ փոխանակ Խահակայ որդւոյ իւրոյ։ Եւ կոչեաց Աբրահամ զանուն տեղւոյն այնորիկ Տէր եահս. զի ասիցեն ցայսօր. 'ի լերինն յայնմիկ Տէր երևեցաւ։ Եւ կոչեաց հրեշտակ Տն զԱբրահամ երկրորդ անգամ յերկնից՝ և ասէ։ Զանձն իմ երդուայ՝ ասէ Տէր. փոխանակ զի արարեր զոյդ զայդ. և ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ. այո՞։ Օրհնելով օրհնեցից զքեզ. և բազմացուցանելով բազմացուցից զզաւակ քո իբրև զաստեղս երկնից բազմութիւնամբ, և իբրև զաւազ առափին ծովուս. և ժառանգիցէ զաւակ քո զքաղաքս հակառակորդաց իւրոց։ Եւ օրհնեսցին 'ի զաւակի քում ամ ազգք երկրի. փոխանակ զի լուար ձայնի իմում։

18։

Ընդէր հանգերձ ծուխն դնելով զՏն աղաչեցուք։ Տն ողորմեա։ Նբէ՛ անգամ լինիմ։

Եւ ևս խաղաղութեամբ։ Օրհնութեամբ և փառաց։

Ընթերցուած յԱրվից։

ՅԲ. 1։

Եւ խօսեցաւ Տն ընդ Մովսեսի և ընդ Ահարոնի յերկրին Եգիպտացւոց, և ասէ։ Վասն այս ելիցի ձեզ սկիզբն ամանց. առաջին եղիցի ձեզ յամսեաս տարւոյ։ Խօսեցարո ընդ ամ ժողովրդեան որդւոցն Իսրայելի և ասասցես՝ 'ի տասներորդում ամենայն այսորիկ առցեն իւրեանց

իւրաքանչիւր ոչխար ըստ տուընս ագռաջն, ոչխար ըստ երդ: Եւ եթէ սակաւ իցէ ի տանն, ոչ թէ չիցէ բաւական լինիլ ոչխարին, առցէ ընդ իւր զդրացի իւր և զընկեր իւր ըստ մարդաթուոյն. իւրաքանչիւր ըստ բաւականի իւրում համարեսցի յոչխարն: Ոչխար կատարեալ՝ արու՝ տարեւոր՝ անարատ լիցի ձեզ. յօդնաց և յայծեաց առնուցուք: Եւ եղիցի ձեզ պահեալ մինչև ի չորս և ի տասն աւուր ամսոյս այսորիկ. և զենցեն զնա ամ բազմութիւն ժողովրդեան որդւոցն Իսրայելի ընդ երեկս: Եւ առցեն յարենէ անտի. և դիցեն ի վերայ երկուց սեմացն և բարձրոյն տանցն, յորս ուտիցեն զնա ի նոսա: Եւ կերիցեն զմիան ի դիշերիս յայսմիկ խորովեալ հրով. Խաղարջ ընդ եղեգի կերիցեն: Եւ ոչ ուտիցէք ի նոցանէ հում և ոչ պաս եփեալ ջրով այլ խորովեալ հրով, զգլուխն ոտիւքն հանդերձ և զփորոտին նորա: Եւ ոչ թողուցուք ի նմանէ յայգ. և ոսկր մի բեկանիցէք ի նմանէ. և որ ինչ մնայցէ ի նմանէ յայգ, հրով այրեսջիք: Եւ այսպէս ուտիցէք, գօտիք ձեր ընդ մէջ, և կօշիկք ձեր յոտս, և ցուպք ձեր ի ձեռին. փութանակի ուտիցէք, զի զատիկ Տեառն է: Եւ անցից ընդ ամ երկիրդ Եգիպտացւոց ի դիշերի յայսմիկ, և հարից զամ անդրանիկ յերկրիդ Եգիպտացւոց ի մարդոյ մինչև յանասուն և յամ որդիան Եգիպտացւոց արարից զվրէժխնդրութի. զի ես եմ Տէր: Եւ եղիցի ձեզ արիւնդ նշանակեալ ի վի տանց, յորս իցէք դուք անդ: Եւ տեսից զարիւնդ, և ապրեցուցից զձեզ, և ոչ լինիցին ի ձեզ հարուածք ի սատակել, յորժամ հար-

Հարկանիցեմ յերկրիդ Եդիպտացւոց։ Եւ եղիցի ձեզ արիւնք այդ՝ի յիշատակ. և տօնիցէք զդա տօն Տ՚ն յազգս ձեր օրէն յաւիտենական տօնիցէք զդա։ Օրեօքն օր բաղարջ ուտիցէք. յառաջնմէ իսկ օրէ անտի անհետ առնիջիք զխմոր՝ի տանց ձերոց. ամ որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն այն յԻսրայէլ։ Յառաջնմէ օրէ անտի մինչև ցօրն եօթներորդ նոմիրեալ եղիցի ձեզ սբ. զամ գործ սպասու մի գործիցէք՝ի նմա, բայց միայն որ գործիցի ամ անձին, այն միայն գործեսցի ձեզ։ Եւ պահեսջիք զպատուիրանս զայս, զի յաւուր յայսմիկ հանից զզօրութիւն ձեր յերկրէս Եդիպտացւոց. և առնիցէք զօրս զայս յազգս ձեր օրէն յաւիտենական։ Ի սկսանելն չորեքտասաներորդի աւուր ամսոյն առաջնոյ՝ յերեկոյեայ բաղարջ ուտիցէք, մինչև ցքսան և մի օր ամսոյն ցերեկոյ։ Օրեօքն օր մի գտցի խմոր՝ի տունս ձեր, ամ որ ուտիցէ խմորեալ՝ սատակեսցի անձն այն՝ի ժողովրդենէ Իսրայելի, յեկաց և բնակաց երկրին։ Խմորեալ մի ուտիցէք. յամ բնակութեան ձերում ուտիցէք բաղարջ։ Եւ կոչեաց Մովսէս զամ Ծերակոյտ որդւոցն Իսրայելի, և ասէ ցնոսա. երթայք առէք ձեզ ոչխար ըստ ազգաց ձերոց, և զնիջիք՝ի զատիկ։ Եւ առնուցուք մշտիկ զոսպայն թաթաւեալ յարեան, որ առ դրօքն իցէ. և սրսկեսջիք զբարտւրսան և զերկզրամբք սեմովքն յարեն անտի որ առ դրօքն, բայց դուք մի ելանիցէք իւրաքանչիւր ըստ դրանն տան իւրոյ մինչև յառաւօտ։ Եւ անցցէ Տէր հարկանել զԵգիպտացիսդ և տեսանիցէ զարիւնն որ՝ի վր բարտւրսն

քին և 'ի վե՛ր երկուց սեմից՝ և զանց առնիցէ Տէր զդրօքն, և ոչ տայցէ թոյլ սատակչին մտանել 'ի տունս ձեր, և հարկանել: Եւ պահեսջիք զբանս զայս՝ օրէն քեզ և որդւոց քոց մինչև յաւիտեան: 24:

Աղօթք Հանդերձ ծուխը դնելով զՏ՛ աղաչեցուք: Տ՛ ողորմեա: Երէ անգամ լինիցի:

Եւ ևս խաղաղութե՛ն: Օրհնութի՛ւն և փառք:

Ընթերցուած 'ի Յոսիանու մարգարէէ:

ԺԱ. 1:

Եւ եղև բան Տ՛ն առ Յոշեան որդի Ամաթեայ՝ և ասէ: Երթ, և գնա՛ 'ի Բեթոռէ քաղաք մեծ, և քարոզեսջիր անդ, զի եղ աղաղակ չարութե՛ն նո՛ր առ իս: Եւ յարեաւ Յոշեան փախչել 'ի Թարսիս յերեսաց Տ՛ն, էջ 'ի Յոպպէ՝ և եգիտ նաւ՝ որ երթայր 'ի Թարսիս, եւ գինս՝ և եմուտ 'ի նա՝ նաւել ընդ նոսա 'ի Թարսիս յերեսաց Տ՛ն: Եւ Տ՛ յարոյց զՀոգի՛ 'ի ծովուն, և նաւն 'ի վտանգի կայր 'ի խորտակիլ: Եւ երկեան նաւավարքն յերկիւղ մեծ, և աղաղակէին առ իւրաքանչիւր աստուածս իւրեանց, և ընկեցին զկարասին 'ի ծով անդր՝ զի թեթևացուսցեն յինքեանց: Եւ Յոշեան իջեալ 'ի խորշ մի նաւին, ննջէր, և խորդայր: Մատեաւ առ նա նաւապետն՝ և ասէ, զի՞նչ է այդ՝ զի խորդաս, արի, կարդա՛ զՏ՛ Ա՛ք, թերևս ապրեցուսցէ զմեզ Ա՛ՔՆ և մի կորիցուք: Եւ ասեն իւրաքանչիւր ցընկեր իւր, եկայք, արկցուք վիճակս՝ և տեսցուք, վա՞ր են չարիքս այս 'ի վե՛ր մեր: Արկին վի-

վիճակ՝ և եղ վիճակն Յովնանու։ Եւ ասեն ցնա. պատմեա մեզ. վ՚ի ՚ր են չարիքս այս մեծ. ուս– ոի գաս՝ կամ յո՞ երթաս. յորմէ՞ աշխարհէ ես՝ կամ յորմի՞ ժողովրդենէ։ Եւ ասէ ցնոսա. Ծառայ Տ՚ն եմ ես՝ և զՏ՚ր Ա՚ծ երկնից պաշտեմ. որ ա– րար զծով և զցամաք։ Եւ երկեան արքն յեր– կիւղ մեծ և ասեն ցնա. զինչ գործեցեր զայդ. (զի գիտացին եթէ յերեսաց Տ՚ն փախուցեալ էր. քանզի պատմեաց նոցա։) Եւ ասեն ցնա. զինչ արասցուք քեզ՝ և դադարեսցէ ծովս ՚ի մէնջ. զի ծովն առաւել ևս խառնիւր՝ և չարու– ցանէր զմրրիկ՚ի վ՚ր նց։ Եւ ասէ ցնս Յովնան. առէք ընկեցէք զիս ՚ի ծովն՝ և դադարեսցէ ՚ի ձէնջ ծովդ. գիտեմ ես՝ եթէ վ՚ր իմ է մրրիկս այս մեծ ՚ի վ՚ր ձեր։ Եւ չանային արքն դարձու– ցանել զնաւն ՚ի ցամաք՝ և ոչ կարէին. զի ծովն ևս քան զևս խառնիւր և սաստկանայր ՚ի վ՚ր նց։ Աղաղակեցին առ Տէր՝ և ասեն. քա՛ւ լեզի Տ՚ր. մի կորիցուք վ՚ր անձին առնս այսորիկ. և մի ա– ծեր ՚ի վ՚ր մեր արիւն արդար. զի դու Տ՚ր ա՛ղ կամեցար՝ և արարեր։ Եւ առին զՅովնան՝ և ըն– կեցին ՚ի ծովն. և դադարեաց ծովն ՚ի խառնո– ւթէ իւրմէ։ Եւ երկեան արքն յերկիւղ մեծ ՚ի Տ՚ն. զենեն զոհս Տ՚ն և ուխտեցին ուխտս։ Եւ հրաման ետ Տ՚ր կիտին մեծի կլանել զՅովնան. և էր Յովնան ՚ի փոր կիտին զերիս տիւս և զե– րիս գիշերս։ Եւ նկաց Յովնան յաղօթս առ Տ՚ր Ա՚ծ՝ ՚ի փորոյ կիտին։ Եւ ասէ. ՚ի նեղութե՛ն իմում աղաղակեցի առ Տ՚ր Ա՚ծ իմ. և լո՛սաւ ինձ յո– րովայնէ գժոխոց աղաղակի իմում. լո՛ւր Տ՚ր ձայ– նի իմում։ Եւ ընկեցեր զիս՝ ի խորս սրտից ծո–

վու. գետք պաշարեցին զնս. ամ զբօսանք քո՝ և ալիք քո անցին՝ ի վե՛ր իմ: Եւ ասացի՝ թէ մերժեցայ յաչաց քոց. արդ՝ իցէ՞ թէ յաւելից հայիլ՝ ի տաճար սո՛ր քո: Հեղան զնևս ջուրք մինչև յոգի՝ անդունդք անհնարինք պաշարեցին զնս: Եմուտ գլուխ իմ ընդ փապարս լերանց. ի՛ջի յերկիր, որոյ՝ նիգք իւր ակք յաւիտենից. եւզեն յապականութե՛ կեանք իմ: Ո՛ք քեզ Տի՛ Ա՛ծ՝ ի նոճաղել հոգւոյ իմոյ կարդացի. զՏի՛ մի՛ շեցի. և եկեսցեն աղօթք իմ՝ ի տաճար սո՛ր քո: Ոք պահեն զուն նայութե՛ և զատութի՛ զողորմութի՛ իւրեանց թողին: Ա՛յլ ես՝ ի ձայն օրհնութե՛ և խոստովանութե՛ մատուցից քեզ պատարագ՝ զոր ուխտեցի, և հատուցից փրկութե՛ Տի՛ն: Եւ հրամայեցաւ՝ ի Տէ՛ ձկանն՝ և եթո՛ւք զնա՝ ի ցամաք: Եւ եղև բան Տի՛ն առ Յովնան երկրորդ անգամ՝ և ասէ: Ե՛ր, և դնա՛ ի Նինուէ քաղաք մե՛ծ. և քարոզեսկի՛ ի նմա զքարոզութի՛ն, զոր խօսեցայ առ քե՛զ: Յարեաւ Յովնան՝ և գնաց՝ ի Նինուէ, ո՛ղ խօսեցաւ ընդ նմա Տի՛ն. և Նինուէ էր քաղաք մե՛ծ Ա՛ստ, իբրև գնաց երից աւուրց ճանապարհ: Եւ սկսաւ Յովնան մտանել՝ ի քաղաքն իբրև աւուր միոյ ճանապարհի. քարոզեաց՝ և ասէ. այլ ևս երիք աւուրք՝ և Նինուէ կործանեսցի: Եւ հաւատացին արքն Նինուէացիք Ա՛ստ՝ և քարոզեցին պահ՝ և զուրձ զգեցան՝ ի մե՛ծամեծաց մինչև ցփոքունս իւրեանց: Եհաս բանն առ թագաւորն Նինուէացւոց. յարեաւ յաթոռոյ իւրմ՝ և մերկացաւ զպատմուճան իւր. զգեցաւ զուրձ՝ և նստաւ՝ ի վե՛ր մոխրոյ: Եւ քարոզեցաւ՝ և պատ-

մեցաւ

մեցաւ ՚ի Հրէից ՚ի Յարտաւարէն և ՚ի մեծամեծաց իւրոց. Եմէ մարդ՝ և անասուն՝ խաշն՝ և արջառ՝ մի ինչ ճաշակեսցին՝ և մի ճարակեսցին. և մի ջուր արբցեն։ Այլ զգեցան քուրձ մարդ՝ և անասուն. և աղաղակեցին առ Ած արտ մեօք. և դարձան իւրաքանչիւր ՚ի ճանապարհէ իւրեանց չարաց, և յանիրաւութենէ՝ որ ՚ի ձեռս իւրեանց։ Այս ասէն՝ ո՞ գիտէ՝ ապաշաւեսցէ Ած՝ և դարձցի ՚ի բարկութենէ սրտմտութենէ իւրոյ, և մի կորիցուք։ Այլ եղեւ Ած զգործս նոցա. զի դարձան իւրաքանչիւր ՚ի ճանապարհէ իւրեանց չարաց. և զղջացաւ Ած ՚ի վերայ չարեացն՝ զոր խոսեցաւ առնել նոցա՝ և ոչ արար։ Այլ տրտմեցաւ Յովնան տրտմութի՛ մեծ՝ և խռովեցաւ։ Այլ եկաց յաղօթս առ Տէր Ած և ասէ. Ով Տէր՝ ո՞չ այս այն էն բանք իմ. մինչ էի անդէն յերկրին իմում. վասն այնորիկ աճապարեցի փախչել ՚ի Թարշիշ. զի գիտէի՛ թէ ողորմած ես դու՝ և գթած. երկայնամիտ՝ և բազմողորմ. և զղջանաս ՚ի վերայ չարեաց։ Այլ արդ՝ Տէր Տէր՝ առ զհոգի իմ ինէն. զի լաւ է ինձ մեռանիլ՝ քան թէ իցեմ կենդանի։ Այլ ասէ Տէր ցՅովնան՝ թէ արդարև յոյժ տրտմեալ իցես։ Այլ ել Յովնան ՚ի քաղաքէն անտի, և նստաւ յանդիման քաղաքին. և արար իւր հովանի՝ և նստաւ քնդ հովանեաւն, մինչև տեսանիցէ, թէ զինչ լինիցի ՚ի քաղաքին։ Այլ հրամայեաց Ած դդմենւոյն. և ել ՚ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինիլ հովանի ՚ի վերայ գլխոյ նորա զովացուցանել զնա ՚ի տառապանաց իւրոց։ Այլ ուրախ եղև Յովնան ՚ի վերայ դդմենւոյն յուրախութիւն մեծ։ Այլ հրամայեաց Ած օրդանին ա-

ռաւօ-

ռաւօտու՝ ի վաղիւ անդր. եհար զդմինին՝ և ցամաքեցաւ։ Եւ եղև՝ ի ծադել արեւուն. հրամայեաց Ջ հողմոյ խորշակի տապախառնի. և անկաւ արև զգլխոցն Յովնանու. և կայր՝ ի տապակուսի՝ և քաղէին ոգիք նր. և ասէր՝ լաւ էր ինձ մեռանիլ քան զայս կեանս իմ։ Եւ ասէ Տր Ջ ցՅովնան. Թէ արդարև յոյժ տրտմեալ իսես՝ ի վր զդմենւոյն. և ասէ՝ յոյժ տրտմեալ եմ մինչև ցմահ։ Եւ ասէ Տէր՝ դու խնայեցեր՝ ի դդմենին՝ յոր չեղեր ինչ աշխատս և ոչ սնուցեր զնա. ի գիշերի եղ՝ և ի միւս գիշերի կորեաւ։ Ես ոչ խնայեցից՝ ի Նինուէ քաղաք մեծ. յորում բնակեալք են աւելի քան զերկոտասան բիւր մարդիկ. որք ոչ ծանեան զաջ և զահեակ իւրեանց. և անասունն բազում։

Ը. 11։

Աղօթք հանդերձ ծունր դնելով զՏր աղաչեցուք։ Տր ողորմեա։ Լսե՛ր անգամ լինեա՛։

Եւ ևս խաղաղութիւն։ Օրհնութի՛ւն և փառք։

Ընթերցուած յԱւետ։

ԺԲ. 24։

Եւ եղև յառաւօտու պահուն հայեցաւ Տէր՝ ի բանակն Եգիպտացւոց սեամբ հրոյն և ամպոյ. և խռովեաց զբանակն Եգիպտացւոց։ Եւ կապեաց զանիւս կառաց նց. և վարեր զնն բռնութիւն։ Ասեն Եգիպտացիքն, փախիցուք յերեսաց Իսրայելի. զի Տր պատերազմի վր նց ընդ Եգիպտացիսն։ Եւ ասէ Տր ցՄովսէս. Ձգեա զձեռն քո՝ ի վր ծովուդ, և կարկատեսցի անդրէն ջուրդ։

և

և ծածկեսցէ զԱրկիպատացիսդ. զկաս դոցա՝ և
զՀեծեալս իւրեանց։ Եւ ձգեաց Առաքէս զձեռն
իւր՝ ի վե՛ր ծովուն. և դարձաւ ջուրն ընդ առա-
ւօտն՝ ի տեղի իւր և Արկիպատացիքն փախեան յե-
րեսաց ջրոյն. և Թօթափեաց Տէր զԱրկիպատա-
ցիսն՝ ի մէջ ծովուն։ Եւ դարձուցեալ զջուրսն՝
ծածկեաց զկառս՝ և զՀեծեալս՝ և զամ զօրու-
թիւն փարաւոնի, որք մտեալ էին զհետ նոցա
՝ի ծով անդր և ոչ միացին՝ ի նոցանէ և ոչ մի։
Եւ որդիքն Իսրայելի գնացին ընդ ցամաք՝ ի
մէջ ծովուն. և ջուրն պարիսպ էր ընդ աջմէ
նոցա, և ընդ ահեկէ իւրեանց։ Եւ ապրեցոյց
Տէր զԻսրայէլ յաւուր յայնմիկ՝ ի ձեռաց Արկիպ-
տացւոցն։ Եւետես Իսրայէլ զԱրկիպատացիսն մե-
ռեալս առ ափն ծովուն. և ետես Իսրայէլ զձեռն
մեծ՝ զոր արար Տէր ընդ Արկիպատացիսն, և եր-
կեաւ ժողովուրդն՝ ի Տէր. և Հաւատացին Ա՛ծ՝
և՝ ի Մովսէս ծառայ նորա։ Յայնժամ երգեաց
Մովսէս՝ և որդիքն Իսրայելի զօրհնութիւս զայս
Ա՛ծ և ասեն։ Օրհնեսցո՛ւք զՏէր, զի փառաւո՛ր է
փառաւորեալ. զերիվարս և զՀեծեալս նոցա ընկ-
կեց՝ ի ծով։ Օգնական և ընդունող իմ Տէր, և
եղև ինձ՝ ի փրկութի՛ւն. սա է իմ Ա՛ծ և փառաւորե-
ցարբեց զսա։ Ա՛ծ հօր իմոյ՝ և բարձր արարից
զսա։ Տէր խորտակէ զպատերազմունս՝ Տէր անուն
նորա։ Զկառս փարաւոնի՝ զզօրութիւնս նորա ընկ-
կեց՝ ի ծով. զընտիրս Հեծելոց՝ և զպատառազէնս,
ընկղմեաց՝ ի ծով կարմիր։ Խորք ծածկեցին զնո-
ս. ընկղմեան յանդունդս իբրև զվէմ։ Ա՛ջ քո Տէր փա-
ռաւորեալ է զօրութի՛ւն, աջ քո Տէր խորտակեաց
զթշնամիս։ Եւ բազմութի՛ւն փառաց քոց մանրե-

ցեր

ցեր զՀակառակորդս, առաքեցեր զբարկութիւն քո՝ և եկեր զնոսա իբրև զեղէգն։ ԵՒ հողմով բարկութեան քո բաժանեցան ջուրք. պաղեցան իբր պարիսպ ջուրք. պաղեցան ալիք ի մէջ ծովու։ Ասաց թշնամին, հալածեցից, և հասից. բաժանեցից զաւար, լցուցից ի նոցանէ զանձն իմ. սատակեցից սրով իմով. տիրեսցէ նոցա ձեռն իմ։ Առաքեցեր զհողմ քո. և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան իբրև զկապար ի ջուրս սաստիկս։ Ո՞վ իցէ նման քեզ յաստուածս Տէր. և կամ ով նմանիցի քեզ փառաւորեալդ ի սքանչելի միաւոք՝ որ առնես զնշանս։ Ձգեցեր զաջ քո՝ և եկուլ զնա երկիր։ Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քումմ այսմ, զոր փրկեցեր. միխիթարեցեր զօրութեամբ քով ի բանակատեղի սրբութեան քոյ։ Լուան ազգք և բարկացան, և երկունք կալան զբնակիչս Փանանացւոց։ Յայնժամ տագնապեցան դատաւորք Եդովմայ, և իշխանք Մովաբացւոց։ Կալաւ զնոս դողումն, հալեցան ամ բնակիչք Փանանացւոց։ Ընկղի ի վրայ նոցա ահ և երկիւղ. մեծութեամբ բազկի քո քարասցին. մինչև անցցէ ժողովուրդ քո Տէր. մինչև անցցէ ժողովուրդ քո այս, զոր ստացար։ Տարեալ տնկեսցես զնոս ի լեառն ժառանգութեան քո, ի պատրաստութիւն քնակութեան քո. զոր արարեր Տէր սրբութիւն. Տէր զոր պատրաստեցին ձեռք քո։ Տէր թագաւորէ յաւիտեան՝ և յաւիտեան և աւս։ Օհ մտին երիվարք փարաւոնի կառօք և հեծելովք նր ի ծով, և էած ի վր նոցա Տէր զուրս ծովուն. և որդիքն Իսրայելի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն։ Եւ եառ Մարիամ մար-

մարգարէ քոյր Հարուխէի զիմիրուխն ՚ի ձեռն իւր. և ելին ամ կանայք զհետ նր թմբկօք, և պարուք ։ Եւ յառաջէր Մարիամ, և ասէր օրհնեցուք զՏր՝ զի փառօք է փառաւորեալ. զձի ևս ընկէց ՚ի ծով ։ ՟Ի. 21 ։

Ողջոյն հանդերձ ծունր դնելով զՏր ազաչեցուք ։ Տր ողորմեա ։ Երեր անգամ կրկնեա ։

Եւ ևս խաղաղութեամբ ։ Օրհնութիւն և փառք ։

Յորժամ զօրհնեսցուք կարգաւ. և զուսաւորութեան զնայել հանգերծեալ են կարգաւ, յայնժամ ըստանձն ընդունի և կանոնէսդ. և պատ մոտեցեալ ՚ի հիւս ոտեանցն ։ ~~Եւ ընդունի զկանոն պատ~~ պատն և երգէն

Հարկաւոր գոյ ։

Լուսաւորեաց Արուսաղէմ, զի հասեալ է լոյս քո. զարդարեա զամարս քո. և փառք Տեառն ՚ի վերայ քո ծագեսցի ։ Օրհներգութեամբ սաղմոսիւք քեզ վայելէ Ընծ օրհնութիւն ՚ի Սիոնէ. և քեզ մատուսցին աղօթք Արուսաղէմ ։ Դուխայ Արուսաղէմ զՏր, և օրհնեա զԸնծ քո Սիոնէ, նոր ժողովուրդ դշնոյ դաստր Սիոնի ։

Ընթերցուած Հայսայեայ մարգարէէ ։
Ի. 1 ։

Լուսաւորեաց՝ լուսաւորեաց Ա՛Ղ. զի հասեալ է լոյս քո. և փառքն Տ՛ն ՚ի վր քո ծագեսցին ։

Օ՛ի ահա խաւար ծածկեաց զերկիր՝ և մառա-
խուղ զհեթանոսս. բայց ՚ի քեզ Տէր յայտնես-
ցի. և փառք ՚ի քեզ երևեսցին: Եւ գնաս-
ցեն թագաւորք ՚ի լոյս քո. և հեթանոսք ՚ի ծա-
գել լուսոյ քո: Համբարձ շուրջ զքեւ զաչս քո.
և տես ժողովեալ առ քեզ զամ մանկունս քո.
զի եկին հասին ՚ի հեռաստանէ որդիք քո. և
դստերք քո ՚ի վերոյ ոսոց նոցա բարձեալք բերի-
ցին: Յայնժամ տեսցես և խնդասցես. երկիցես՝
և զարհուրեսցիս ՚ի սրտի քումմ. զի փոխեսցի ՚ի
քեզ մեծութի ծովու. և ազգաց՝ և ժողովրդոց:
Եկեսցեն ՚ի քեզ երամակք ուղտուց. և ծած-
կեսցեն զքեզ ուղտերամակքն Մադիամու՝ և
Գեփայ. ամենեքեան ՚ի Սաբայէ եկեսցեն, բե-
րել ոսկի և կնդրուկ՝ և ականս պատուականս.
և փրկութիւն Տեառն ասացեն զաւետիս: Եւ ամ
խաշինքն Կեդարու ժողովեսցին առ քեզ. և
խոյք Նաբեովթայ ածցին, և մատուսցին ընդու-
նելի պատարագք ՚ի վերայ սեզանոյ իմոյ. և տուն
աղօթից իմոց փառաւորեսցի: Ովքե՞ն սոքա՝ որք
իբրև զամպս թռուցեալք են. և իբրև զաղաւնիս
ձագախառն երամովքն գան առ իս: Ինձ ակն ու-
նին կղզիք՝ և նաւք Թարշիշ յառաջագոյն՝ ա-
ծել զորդիս քո ՚ի հեռաստանէ. զարծաթ և զոս-
կի ընդ իւրեանս. վասն անուան Տեառն սրբոյն. և վա
սրբոյն Իսրայելի փառաւորելոյ: Եւ շինեսցեն
որդիք այլազգեաց զպարիսպս քո. և թագաւորք
նոցա ընծայեսցեն քեզ, զի վասն բարկութեան իմոյ
հարի զքեզ. և վասն ողորմութեան իմոյ սիրեցի
զքեզ: Եւ բացցին դրունք քո հանապազորդ ՚ի
աւուրս և ՚ի գիշերի. և մի փակեսցին. կրել ՚ի

քեզ

քեզ զզօրութի՛ ազգաց. և զթագաւորս իւրեանց
ածցեն առ քեզ ։ Ոչ ազգք և թագաւորք որք
քեզ ոչ ծառայեսցեն, կորիցեն. և ազգքն աւե-
րելով աւերեսցին ։ Նա փառքն Լիբանանու առ
քեզ եկեսցեն. սարդիւն և սօսի՛. նոճիւն և
մայրի՛. առհասարակ փառաւոր առնել զտեղի
սրբութե՛ իմոյ. և զտեղի ոտից իմոց փառաւորե-
ցից ։ 13 ։

Եղօթք հանդերձ ծունր դնելով զՏր աղաչեա-
ցուք ։ Տր ողորմեա՛ ։ Լուր՝ անգամ լինիմ ։

Նա ևս խաղաղութե՛ ։ Օրհնութի՛ և փառք ։

Ընթերցուած ՚ի Յովելեայ ։
ԼԲ. 1 ։

Ով է դա՝ որ թագուցանէ յինէն զխորհուրդ.
ժողովեալ զբանս ՚ի սրտի. և համարի յինէն
թագուցանել ։ Պնտեա՛ իբրև զայր զմէջ քո.
հարցից զքեզ՝ և տուր ինձ պատասխանի ։ Ո՞ւր
էիր՝ մինչ ես հիմունս արկանէի երկրի. պատմեա՛
ինձ. եթէ խելամուտ իցես հանճարոյ ։ Ո՛վ եդ
զչափ դորա, թէ գիտիցես. կամ ո՛վ էարկ ՚ի
վե՛ դորա զլար ։ Յո՞ր վե՛ հաստատեցան աղեք
դորա. ո՛վ է՝ որ էարկ զվէմն անկեան ՚ի դմա ։
Յորժամ եղեն աստղք ծեզք՝ ա՛մ հրեշ-
տակք աստեղաց օրհնեցին զիս մեծաձայն. և
ա՛մ հրեշտակք իմ գովեցին ։ Փակեցի զծով
դրամբք. յորժամ ծնաւ յորովայնէ մոր իւրոյ
ելանել ։ Եդի նմա զմէդ ՚ի հանդերձ. և զմա-
ռախուղ նմա ՚ի խանձարուրս ։ Եդի նմա սահ-
մանս՝ եդեալ փականս, և դրունս ։ Ասացի՝ ցայդ

վայր

վայր եկեսցես՝ և այլ մի անցանիցես. այլ անդրէն
՚ի քեզ խորտակեսցին ալիք քո: Եթէ առ քեզ
կարգեցի զոյն առաւօտուն, արուսեակն եռես
զկարգ իւր: Հասանիլ ՚ի վեր թևոց երկրի. թօ-
թափել զամպարիշտս ՚ի նմանէ: Կամ թէ քո
առեալ զհողն կաւ՝ ստեղծեր կենդանի՝ և խօսուն
եղեր ընա յերկրի: Եւ մերժեցեր զոյն յամ-
պարշաւ. զբազուկս ամբարտաւանիդ խորտա-
կեցեր: Հասեալ էցես յակն ծովու. և ըստ հետս
անդնդոց շրջեցար: Ականջին քեզ ահիւ գրուիք
մահու. յարատանայ գժոխոց տեսեալ զքեզ
սարսեցան: Խելամուտ էցես լայնութիւն առ ՚ի
ներքոյ երկնից. ասէ պատմեա՝ որչափ իցէ:
Օ՞ր ինչ երկիր իցէ՝ յորում լոյս ագանիցի՝ կամ
պի՞նչ տեղի խաւարի: Տանիցես զնս ՚ի սահմանս
նոյ եթէ խելամուտ էցես շուրջ նոյ: Ծնեալ
դիտիցես՝ և ընդ այն ժամանակս ծնեալ էցես.
և թիւ աւուրց քոց բազումք իցեն: Երթեալ
էցես ՚ի շտեմարանս ձեան. և զկանձս կարկտի
տեսեալ էցես: Համբարեալ կայցէ քեզ ՚ի ժա-
մանակս թշնամեաց՝ յօր մարտի՝ և պատերազմի:
Ուսա՞ր եղանիցէ ելեալն. կամ սփռիցի հարաւ
՚ի ներքոյ երկնից: Ո՞ պատրաստեաց զհոսանս
տասիկ անձրևոյ՝ և զձանապարհս ամպրոպաց
տանելոյ յերկիր: Ուր ոչ գոյ մարդ՝ յանապատ
յանմարդի: Յագեցուցանել զանկոնս, և զան-
շէն, և բղխեցուցանել զբոյս դալարոյ: Ո՞ է հայր
անձրևի. և ումն է՝ որ ծնաւ զշաղս ցօղոյ: 28:

Ընդէ՞ր հանդերձ ծնունդ դնելով զՏր աղաչես-
ցուք: Տր ողորմեա: Երբ անգամ լինիցի:

Աւր ևս խաղաղութեան։ Օրհնութեան և փառաց։

Ընթերցուած ի Յեսուէայ որդւոյ Նաւեայ։

Ա. 1։

Եւ եղև յետ վախճանելոյն Մովսեսի ծառայի Տն խօսեցաւ Տր ընդ Յեսուէայ որդւոյ Նաւեայ պաշտօնէի Մովսեսի՝ և ասէ։ Մովսէս ծառայ իմ վախճանեցաւ. արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան՝ դու և ամ ժողովրդդ քո՝ յերկիրն զոր ես տացդ որդւոցն Իսրայելի։ Ամ տեղիս յոր հասանիցեն գնացք ոտից ձերոց՝ ձեզ տացդ զնա՝ ոպ խօսեցայ ընդ Մովսեսի։ Օանապատն. և զլ ի- բանաներն. մինչև ցգետն մեծ՝ ցգետն Եւփրատ. զամ երկիրն Քետացւոց մինչև ցծովն վերջնի՝ ի մտից արևու՝ ձեզ լինիցին սահմանքն։ Եւ ոչք կացցէ ընդդէմ ձեր զամ աւուրս կենաց քոց։ Եւ ոպ էի ընդ Մովսեսի՝ նոյնպես եղէց և ընդ քեզ. և ոչ թողից զքեզ՝ և ոչ անտես արարից զքեզ։ Օօրացիր, և քաջ լեր. զի դու բաժա- նեսցես ժողովրդեանդ այդմիկ զերկիրն՝ զոր երդ- ուայ հարցն քոց տալ դոցա։ Ընդ զօրացիր՝ և քաջ լեր յոյժ. պահել և առնել ըստ ամ օրի- նացն ոպ պատուիրեաց քեզ Մովսէս ծառայ իմ. և մի խոտորիցիս ի նոցանէ յաջ կամ յահեակ. զի խելամուտ լինիցիս ամ զինչ և գործեսցես։ Եւ մի մերժիցես զբեր օրինացս այսոցիկ ի բերանոյ քումմէ. և խոկասցես ի գա՛ի տուէ և ի գիշե- րի՝ զի խնամացիս առնել զամ գրեալսդ ի դմա. և ապա յաջողեսցիս և ուղղեսցես զճանապարհս քո, և ապա խելամուտ լինիցիս։ Ահա պատուէր-

թեմ քեզ. զօրացի՛ր՝ և քաջ լեր. մի զանգիտիցես, և մի երկնչիցիս՝ զի ընդ քեզ է Տի Աստուած քո յամենայն տեղիս ուր և երթայցես։ 9։

Ա՚ղօթք հանդերձ ծունր դնելով զՏի աղաչեցուք։ Տի ողորմեա։ Երեք անգամ լինի։

Եւ ևս խաղաղութեամբ։ Օրհնութիւն և փառք։

Ընթերցուած՚ի չորրորդ Յաղագս որութեանց։
Է. 1։

Եւ եղև՚ի վերացուցանել Տէր զԵղիա շաւիժամամբ յերկինս. և գնացին Եղիա և Եղիսէե՚ի Գաղգաղա։ Եւ ասէ Եղիա ցԵղիսէե. նիստ դու աստ. զի Տի առաքեաց զիս՚ի Յորդանան։ Եւ ասէ Եղիսէե. կենդանի է Տէր, և կենդանի է անձն քո՝ թէ թողից զքեզ։ Եւ եկին՚ի Յորդանան։ Եւ եկին որդիք մարգարէիցն՝ որք՚ի Յորդանան՝ առ Եղիսէե, և ասեն ցնա. եթէ գիտես, զի այսօր առնու Տէր զտէրդ՚ի գլխոյ քումմէ։ Եւ ասէ. գիտեմ՚ և ես, լուռ լերուք։ Եւ ասէ Եղիա ցԵղիսէե. նիստ դու աստ. զի Տի առաքեաց զիս Յերիքով։ Եւ ասէ. կենդանի է Տէր, և կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ։ Եւ եկին Յերիքով։ Եւ մատեան որդիք մարգարէիցն որք Յերիքով առ Եղիսէե, և ասեն ցնա. եթէ գիտիցե՞ս զի այսօր առնու Տէր զտէրդ՚ի գլխոյ քումմէ։ Եւ ասէ. գիտեմ և ես, լուռ լերուք։ Եւ ասէ ցնա Եղիա. նիստ դու աստ. զի Տի առաքեաց զիս՚ի Յորդանան։ Եւ ասէ Եղիսէե. կենդանի է Տէր, և կենդանի է անձն քո՝ եթէ թողից զքեզ։ Եւ գնացին երկո-

երկոքեան։ Եւ յիսուն այր՝ յորդւոցն մարգա-
րէից, և կացին ի հանդիպոյ ի բացեայ, և եր-
կոքին կային յերեքն Յորդանանու։ Եւ Եա՛ռ
Եղիա զմաշկեակն իւր, և ծալեաց, և եհար զջուրն,
և բաժանեցաւ ջուրն յայսկոյս և յայնկոյս, և
անցին երկոքեան ընդ ցամաք։ Եւ եղև ընդ ան-
ցանելն նոցա, ասէ Եղիա. Խ՛ղիսէէ, խնդրեա
զինէ՛ս արարիչ քեզ մինչեւ վերացեալ եմ ի
քէն։ Եւ ասէ Եղիսէէ. եղիցի կրկին ոգի քո
ի վե՛ր իմ։ Եւ ասէ Եղիա. դժուարինս խնդրե-
ցեր. բայց թէ տեսցես զիս յամբառնալ իմմէ
ի քէն, եղիցի այնպէս. ապա թէ ոչ՝ մի եղիցի։
Եւ եղև մինչդեռ գնային նո՛ք. երթային, և խո-
սէին, և ահա կառք հրեղէնք և երիվարք հրեղէնք
անջրպետեցին՝ի մէջ երկոցունց. և վերացաւ Ե-
ղիա շարժմամբ յերկինս։ Եւ Եղիսէէ հայէր, և
աղաղակէր. Հա՛յր, հա՛յր, կառքդ Իսրայելի և հե-
ծեալք նորա, և այլ ոչ եւս տե՛սա՝ և բռնեաց ե-
հար զհանդերձից իւրոց, և պատառեաց յերկուս
ծո՛ւէնս։ Եւ Եա՛ռ Եղիսէէ զմաշկեակն Եղիայի
որ ընկեց՝ի վե՛ր նորա և դարձաւ Եղիսէէ. և
եկաց առ եզերն Յորդանանու։ Եւ Եա՛ռ զմաշ-
կեակն Եղիայի, որ ընկեց՝ի վե՛ր նո՛ր. և եհար
զջուրն՝ և ասէ. ո՛ւր ես Տէր Աստ Եղիայի ա՛ւ-
դով։ Եւ եհար զջուրն. և բաժանեցան յայս
կոյս յայնկոյս. և եանց Եղիսէէ։ Իբրև տեսին
որդիք մարգարէիցն, որք յԵրիքովա՛ի հանդի-
պոյն՝ և ասեն, հանդեաւ ոգին Եղիայի՝ի վե՛ր
Եղիսէի և եկին ընդ առաջ նորա՝ և երկիրպա-
դին նմա՝ի վե՛ր երկրի։ Եւ ասեն ցնա. ահաւա-
սիկ են ընդ ծառայս քո որդիք զօրութե՛ան որք

յիսուն. երթիցեն՝ և խնդրեսցեն զտէրն քո. գուցէ հառ զնա Հոգին Տն. և ընկեց զնա առ Յորդանանու՝ կէ՛ ի վերայ միոյ ուրուք լերանց. և կամ ՚ի վի՛ միոյ ուրուք բլրոց: Եւ ասէ Եղիսէէ. մի՛ առաքէք: Եւ բռնադատեցին զնա՝ մինչև ամաչէր. և ասէ՝ առաքեցէք: Եւ առաքեցին յիսուն արս. և խնդրեցին զերիս աւուրս՝ և ոչ գտին զնա: Եւ դարձան առ նա. և նա նստէր Երիքով. և ասէ ցնոսա Եղիսէէ. ո՞չ ասացի ձեզ՝ թէ մի՛ երթայք: Եւ ասեն արք քաղաքին ցԵղիսէէ. ահաւասիկ բնակութի՛ն քաղաքիս բարի է, որպ և տիրդ խակ տեսանէ. և ջուրքս չար. և երկիրս անզաւակ: Եւ ասէ Եղիսէէ. առէք առ իս կուժ մի՛ նոր. և դիք այդր. և բերին առ նա: Եւ ել Եղիսէէ յականս ջրոցն՝ և էարկ անդ աղ. և ասէ՝ այսպէս ասէ Տի՛. բժշկեմ՛ զջուրս զայսոսիկ. և մի՛ ևս լինի այդ ՚ի մահ և յանզաւակութի՛ն: Եւ բժշկեցան ջուրքն մինչև ցայսօր զբան բանին Եղիսէի՛, զոր խօսեցաւ: 22:

Ելիք հանդերձ ծանր դնելով զՏի՛ աղաչեցաք: Տի՛ ողորմեա՛: Երբ՛ անգամ լինիցի՛:

Եւ ևս խաղաղութի՛ն: Օրհնութի՛ւն և փառք:

Ընթերցուած Յերեմեայ մարգարէէ:

Ճ. 31:

Ահաւասիկ աւուրք գան ասէ Տի՛. և ուխտեցից տո՛ւն Իսրայելի՛ և տունդ Յուդայ ուխտ նոր: Ոչ ըստ ուխտին զոր ուխտեցի ընդ հարս նոցա՝ յաւուր յորում առի զձեռանէ նո՛ՅՀանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց, զի նոքա ոչ կացին յուխտի՛ն

տին իմում, և ես անփոյթ արարի զնոցանէ՝ ա-
սէ Տ՛ր։ Ա՛յլ այս է ուխտ՝ զոր ուխտեցից տանդ
Իսրայելի յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ Տ՛ր. տայց
զօրէնս իմ՛ ի միտս նոցա՝ և ի սիրտս նոցն գրեցից
զնա. և եղէց նոցա Ա՛Ծ. և նոքա եղիցին ինձ՛ ի ժո-
ղովուրդ։ Եւ մի՛ ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր
զընկեր իւր. իւրաքանչիւր զեղբայր իւր՝ ասել՝
Թէ ծանիր զՏ՛ր. զի ամենեքեան ծանիցեն զիս՛ ի
փոքրկանց նոցա մինչև՛ ի մեծամեծս՝ ասէ Տ՛ր. զի
քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա. և զմեղս նոցա
ոչ ևս յիշեցից։ 34։

Ա՛ղթք հանդերձ ծուխը դնելով զՏ՛ր աղաչես-
ցուք։ Տ՛ր ողորմեա՛։ Ես ունկամ լինիմ։

Եւ ևս խաղաղութիւն։ Օրհնութի՛ւն և փառք։

Ընթերցուած յիշեկիելէ մարգարէէ
է. ։

Ա՛ւ եղև՛ ի վե՛ր իմ՛ ձեռն Տ՛ն. և եհան զիս
ոգւով Տ՛ն. և եդ զիս՛ ի մէջ դաշտին. և այն լե-
ր ոսկերօք մարդկան։ Եւ շրջեցոյց զիս շուրջ
զոսկերօքն. և ահա բազում յոյժ էին՛ ի վե՛ր ե-
րեսաց դաշտին. և ցամաքեալք յոյժ։ Եւ ասէ
ցիս՝ որդի՛ մարդոյ՝ իցէ՞ Թէ կենդանի լինիցին
ոսկերքդ այդոքիկ։ Եւ ասեմ, Տ՛ր Տ՛ր դու գի-
տես զայդ։ Եւ ասէ ցիս. որդի՛ մարդոյ մարգա-
րեա՛ց՝ ի վե՛ր ոսկերացդ այդոցիկ՝ և ասասցես
ցդոսա. ոսկերք ցամաքեալք՝ լո՛ւարուք զպատ-
գամս Տ՛ն։ Այսպէս ասէ Տ՛ր Տ՛ր ցոսկերսդ ցայ-
դոսիկ. ահաւասիկ ես ածեմ՛ ի վե՛ր ձեր շունչ՛
կենդանի։ Եւ տայ՛ ի ձեզ մարմինս, և անիջ

ի վը ձեր մարմինս. և ձգեցից ի վը ձեր մրիճ.
և տաց զոգի իմ ի ձեզ. և լինիցիք կենդանիք.
և ծանիջիք, եթէ ես եմ Տր: Եւ մարգարէ-
ացայ ոտ և հրաման ետ ինձ. և եղև բարբառ ի
մարգարէանալն իմում. և ահա շարժումն. և
մերձեցաւ ոսկր առ ոսկր, առ իւրաքանչիւր
յօդս: Եւ տեսի՝ և ահա ջիլք՝ և մարմինք պա-
տէին. և ձգիւր ի վը նց մրիճ. և շունչ ոչ գոյր
ի նս: Եւ ասէ ցիս, մարգարէաց որդի մարդոյ՝
մարգարէաց ի վը շնչոյն. և ասասցես ցշունչն.
այսպէս ասէ Տր Տր. ևկ շունչ՝ ի չորից հողմոց.
և փչեաց ի մեռեալս յայսոսիկ՝ և կեցցեն: Եւ
մարգարէացայ՝ ոտ և հրաման ետ ինձ Տր. և
եմուտ ի նս շունչ. և եղեն կենդանիք. և կանգ-
նեցան՝ կացին ի վը ոտից իւրեանց, ժողովր
բազումք յոյժ յոյժ: Եւ խօսեցաւ ընդ իս Տր,
և ասէ. որդի մարդոյ, ոսկերքդ այդոքիկ ամ
տունդ Իսրայելի են. և դոքա ասեն. չորացան
ոսկերք մեր՝ հատաւ յոյս մեր՝ և մեռաք: Ա ն
այդորիկ մարգարէաց՝ և ասասցես ցդոսա. այս-
պէս ասէ Տր Տն. ահաւադիկ ես բացից զգե-
րեզմանս ձեր. և հանից զձեզ ի գերեզմանաց
ձերոց ժողովուրդ իմ. և տարայց զձեզ յերկիրն
Իսրայելի: Եւ ծանիջիք՝ եթէ ես եմ Տր. ի բա-
նալ ինձ զգերեզմանս ձեր՝ և հանել զձեզ ի գե-
րեզմանաց ձերոց ժողովուրդ իմ: Եւ տաց զոգի
իմ ի ձեզ. և լինիջիք կենդանիք. և եդից զձեզ
յերկրին ձերում. և ծանիջիք եթէ ես եմ Տր.
խօսեցայ՝ և արարից, ասէ Տր Տր: 14:

Աղօթք հանդերձ ծունր գնելոյ զՏէր աղաչեցուք ։ Տէր ողորմեա ։ Երեք անգամ ։

Եւ ասէ խաղաղութիւն ։ Օրհնութիւն և փառք ։

Յաւարտ ընկերցուածոցս հրամանեն չեղեղեցին, և կարդան զՈւանիկէն ի քէնմ ։ Եւ ժամակարգն ապաւ ասէն ։

Ընթերցուած ի Գանիէլէ մարգարէէ ։ Գ. ։

Յամին ութերորդի Կաբուգոդոնոսոր արքայի, արար պատկեր ոսկի, բարձրութիւն նր վաթսուն կանգուն, և լայնութիւն նր կանգուն մեց. և կանգնեաց զնա ի դաշտին Դէերայ յաշխարհին Բաբելացւոց ։ Եւ արձակեաց ժողովել զզօրավարս՝ և զզօրագլուխս՝ և զկուսակալս՝ զպետս՝ և զբանաւորս՝ և զգործակալս՝ և զամ իշխանս աշխարհաց, գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Կաբուգոդոնոսոր ։ Եւ ժողովեցան կուսակալք՝ զօրավարք՝ և զօրագլուխք՝ պետք՝ և բանաւորք, մեծամեծք՝ և գործակալք՝ և ամ իշխանք աշխարհաց. գալ ի նաւակատիս պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Կաբուգոդոնոսոր. և կային առաջի պատկերին՝ զոր կանգնեաց արքայն Կաբուգոդոնոսոր ։ Եւ քարոզ կարդայր զօրուքն՝ և ասէր. ձեզ ասի ազգք՝ և աղինք՝ և լեզուք ։ Յորժամ լսիցէք զձայն փողոյ՝ սրնգի՝ Թմբկի՝ և քնարի՝ տաւղի և երգոց միաբանութեամ՝ և ամ ազգաց արուեստականաց, անկանիջիք՝ և երկիրպագանիջիք

պատկերին՝ զոր կանգնեաց Յաբուգոդոնոսոր արքայ։ Եւ որ ոչ անկեալ երկիրպագանիցէ՝ ի նմին ժամու ընկեսցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Եւ եղև իբրև լուան ազգքն զձայն փողոյն՝ սրնգին՝ տաւղի՝ և նուագարանաց, և ամ ազգաց արուեստականաց, անկանէին ամ ազգք և ազինք՝ և լեզուք, և երկիրպագանէին պատկերին ոսկւոյ. զոր կանգնեաց արքայն Յաբուգոդոնոսոր։ Այնժամ մատեան արք Քաղդեացիք և եղեն չարախօսք զհրեից առ Նաբուգոդոնոսոր։ Եւ ասեն. արքայ՝ յաւիտեան կաց։ Դու հրաման եծեր ամ մարդոյ՝ որ լսիցէ զձայն փողոյ՝ և սրնգի՝ և քնարի. և տաւղի՝ և նուագարանաց, և ամ ազգաց արուեստականաց, Եւ որ ոչ երկիրպագանիցէ պատկերին ոսկւոյ՝ անկցի ի հնոց հրոյն բորբոքելոյ։ Արդ՝ են աստ արք հրեայք, զորս կացուցեր ի վէր գործոց աշխարհիս Բաբելացւոց, Սեդրաք, Միսաք, և Աբեդնագով. արք ոչ հնազանդեցան հրամանի քումմ արքայ, և զձիս քո ոչ պաշտեն, և պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն։ Այնժամ Նաբուգոդոնոսոր սրտմտութիւն և բարկութիւն հրամայեաց ածել զՍեդրաք՝ զՄիսաք՝ և զԱբեդնագով. և ածին առաջի թագաւորին։ Պատասխանի ետ Նաբուգոդոնոսոր՝ և ասէ ցնոսա. Թէ արդարև՝ Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնագով, զձիս իմ ոչ պաշտէք՝ և պատկերին ոսկւոյ՝ զոր կանգնեցի, երկիր ոչ պագանիցէք։ Ապա եթէ պատրաստք լինիցիք. զի յորժամ լսիցէք զձայն փողոյ՝ սրնգի՝ և թմբկի՝ և քնարի, և զմիաբանութիւնն ամ ազգաց արուեստականաց, անկանիք

նիցիք՝ և երկրապագանիցէք պատկերին՝ զոր արա-
րի. ապա թէ ոչ պագանիցէք երկիր՝ ի նմին
ժամու անկցիք ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ո՞վ
է Ած՝ որ փրկեսցէ զձեզ ի ձեռաց իմոց: Պա-
տասխանի ետուն՝ Սեդրաք՝ Միսաք՝ և Աբեդնա-
գով, և ասեն ցարքայ Նաբուգոդոնոսոր. ոչինչ
է պիտոյ վն բանիդ այդորիկ տալ քեզ պատաս-
խանի: Օի է մեր Ած յերկինս՝ զոր մեքն պաշ-
տեմք. կարօղ է փրկել զմեզ ի հնոցէ հրոյ
բորբոքելոյ. և ի ձեռաց քոց արքայ՝ ապրեցու-
ցանել զմեզ: Ապա թէ ոչ՝ այս լինչ յայտնի
լեցի քեզ արքայ. զդիս քո մեք ոչ պաշտեմք.
և պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ
պագանեմք: Յայնժամ Նաբուգոդոնոսոր լե-
ցեալ սրտմտութեա՛. և դէմն երեսաց նո՛ր շրջեցաւ՝
ի վե՛ր Սեդրաքայ՝ Միսաքայ՝ և Աբեդնագովի. և
ասէ՝ չեռուցէք զհնոցն եօթնապատիկ՝ զի մինչև
ի վախճան այրեսցին: Նա՛ւ արք հինգ զօրաւորք
զօրութե՛ կապեցին զՍեդրաք՝ զՄիսաք՝ և զԱ-
բեդնագով արկանել ի հնոց հրոյն բորբոքելոյ:
Յայնժամ արքն այնոքիկ կապեցան պատմու-
ճանօք՝ և վարտեզօք, արտախուրակօք՝ և զան-
կապանօք իւրեանց. և ընկեցան ի մէջ հնոցի
հրոյն բորբոքելոյ: Օի հրամանն թագաւորին
աստիճանայր. և հնոցն բորբոքեր եօթնապատիկ
առաւել յոյժ: Նա՛ւ երեքեին նո՛ր Սեդրաք՝ Մի-
սաք՝ և Աբեդնագով, անկան ի մէջ հնոցին կա-
պեալք: Նա՛ւ գնային ի մէջ հրոյն, օրհնէին՝ և
դովէին զՏ՛ր Ած: Յարեաւ Ազարիա. և եկաց
յաղօթս այսպէս. Եւթաց զբերան իւր ի մէջ հրոյն՝
և ասէ. Օրհնեալ ես Տ՛ր Ած հարցն մերոց.

գո-

գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեան: Օ՛ի արդար ես յամի՛ զոր ածեր ՚ի վե՛ր. և գործք քո ճշմարիտք են. և ուղիք են ճանապարհք քո՝ և ամ դատաստան քո ճշմարտութի՛ն: Զի իրաւունս ճշմարտութե՛ն արարեր՝ ըզ ամի զոր արարեր մեզ և քաղաքին սրբոյ Երուսաղէմի. զի ճշմարտութի՛ւ և յիրաւի ածեր զայս ամ՝ վե՛ր մեզաց մերոց: Օ՛ի մեղաք՝ և անօրինեցաք՝ ապստամբ լինել ՚ի քէն. և դուն մեղաք յամի՛: Զի պատուիրանաց քոց ոչ անսացաք. ոչ պահեցաք՝ և ոչ արարաք՝ որ պատուիրեցեր մեզ, զի բարի լինիցի՛ մեզ: Զի զամ՝ զոր ածեր ՚ի վե՛ր մեր, և զամ՝ զոր արարեր մեզ՝ արդար դատաստանաւ արարեր: Զի մատնեցեր զմեզ ՚ի ձեռս թշնամեաց մերոց, անօրինաց՝ ատելոց՝ ապստամբողաց. և թագաւորի անիրաւի և չարի քան զամ երկիր: Զի արդ՝ ոչ գոյ մեզ բանալ զբերանս, զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց և պաշտօնէից: Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վե՛ր անուան քո. և մի՛ ցրեր զուխտ քո՛: Զի մի՛ ՚ի բաց առներ ըղողորմութիս քո ՚ի մէնջ. վե՛ր Աբրահամու սիրելւոյ քո՝ և վե՛ր Իսահակայ ծառայի քո՝ և վե՛ր Իւի սրբոյ քո: Որոց խոստացար բազմացուցանել զզաւակ նոցա իբրև զաստեղս երկնից. և իբրև զաւազ առ ափն ծովու: Զի արդ Տէ՛ր նուազեցաք քան զամ ազգս, և եմք տառապեալք յամ երկրի, այսօր վե՛ր մեղաց մերոց: Զի ոչ գոյ ՚ի ժամանակի յայսմիկ իշխան, մարգարե, և առաջնորդ. ոչ ողջակէզք՝ և ոչ զոհք՝ և ոչ պատարագք՝ և ոչ խունկք, և ոչ տեղի տալոյ երեսայրիս առաջի քո. և գտանել

զողոր-

զողորմութի՛ւն ի քէն, այլ անձամբք բիւրելովք՝ և հոգւովք տառապանաց ընդունելի լիցուք։ Իբրև զողջակէզս խոյոց՝ և զոչխարակաց՝ և իբրև զբիւրաւորս գառանց պարարտաց, այնպէս եղիցի պատարագս մեր այսօր առաջի քո. լինել կատարեալ զկնի քո. զի չիք ամօթ յուսացելոց ի քեզ։ Եւ արդ՝ գամք զհետ քո ամ սրտիւք մերովք. երկնչիմք ի քէն, և խնդրեմք զերեսս քո։ Մի յամօթ առներ զմեզ. այլ արա ընդ մեզ ըստ հեզութեան քում. և ըստ բազում ողորմութեան քում. Եւ փրկեա զմեզ ի սքանչելեացդ քոց. և տուր փառս անուան քում Տի։ Եւ յայսմօթ լեցին ամենեքեան՝ ոչ ցուցանեն չարիս ծառայից քոց. և ամաչեսցեն, յամ բռնութի՛ւն իւրեանց. և զօրանի՛ն նց խորտակեսցի։ Եւ ծանիցեն՝ զի դու ես Տի Ած միայն. և փառաւորեալ ի քո ամ տիեզերաց։ Եւ ոչ դադարէին ողք արիւնք զնո սպասաւորք թագաւորին՝ ի զհնոցն բորբոքելոյ, նաւթիւ, և ձիւթով, և վշով և ոսկով։ Եւ ելանէր դիզանայր բոցն ի վերոյ քան զհնոցն ի քառասուն և չինն կանգուն։ Եւ շրջէր՝ պատէր շուրջ զհնոցսն, և այրէր զորս գտանէր ի Քաղդեացւոց անտի։ Եւ հրեշտակ Ա՛յ էջ եկաց ընդ Ազարիանն ի հնոցի անդ. և թօթափեաց զբոց հրոյն ի հնոցէ անտի։ Եւ սրտի ի մէջ հնոցին իբրև զհով՝ որ ցօղագին շնչէցէ. և ոչ մերձենայր ամենևին հուրն ի նոս. ոչ տրտմեցուցանէր՝ և ոչ նեղէր զնոսա։ Յայնժամ երեքեանն իբրև ի միոջէ բերանոյ օրհնէին՝ և գովէին՝ և փառաւոր առնէին զԱ՛ծ՝ և ասէին։ Օրհնեալ ես Տի Ած հարցն մերոց, գովեալ՝ և այ-

ռաւել բարձրացեալ յաւիտեանս. և օրհնեալ է անուն սուրբ փառաց քոց. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեալ ես՝ի տաճարի փառաց սրբութեան քո. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեալ ես՝ որ հայիս յանդունդս. և նստիս՝ի քերովբէս. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեալ ես՝ի վրայ աթոռոյ արքայութեան քո. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեալ ես՝ի վրայ հաստատութեան երկնից. գովեալ՝ և առաւել բարձրացեալ յաւիտեանս: Օրհնեցէք ամ գործք Տն զՏր. օրհնեցէք՝ և բարձր արարէք զնա յաւիտեանս: Օրհնեցէք երկինք զՏր. օրհնեցէք: Օրհնեցէք հրեշտակք Տն զՏր. օրհնեն: Օրհնեցէք զօրք ամ, ՚ի վերոյ քան զերկինս զՏր. օրհնեցէք և բարձր: Օրհնեցէք ամ լուսատուիք Տն զՏր. օրհնեն: Օրհնեցէք արև և լուսին զՏր. օրհնեն: Օրհնեցէք ամ աստեղք երկնից զՏր. օրհնեն: Օրհնեցէք ամ անձրևք և ցօղք զՏր օրհնեն: Օրհնեցէք ամ հողմք զՏր. օրհնեն: Օրհնեցէք հուր և տապ զՏր. օրհնեն: Օրհնեցէք ցուրտ և տօթ զՏր. օրհնեն: Օրհնեցէք եղեամն և ձիւնաբեր զՏր. օրհնեն: Օրհնեցէք սառն և պարզ զՏր. օրհնեն: Օրհնեցէք պաղ և ձիւն զՏր. օրհնեն: Օրհնեցէք տիւք և գիշերք զՏր. օրհնեն: Օրհնեցէք լոյս և խաւար զՏր. օրհնեն: Օրհնեցէք ամպք և փայլատակունք զՏր. օրհնեն: Օրհնեցէ երկիր զՏր. օրհնեսցէ: Օրհնեցէք լերինք և բարձունք զՏր. օրհնեն: Օրհնեցէք ամ բոյսք երկրի զՏր. օրհնեն: Օրհնեցէք աղբիւրք զՏր.

